

Սուրիահայ մամուլի պատմութիւն

ԱՐՏԱՇԷՍ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Թէեւ մեր ուսումնասիրութեան վերնագիրը դրուած է Սուրիահայ մամուլի պատմութիւն, բայց խորքին մէջ աւելի ճիշդ պիտի ըլլար վերնագրել Հայկական մամուլի պատմութիւն, որովհետեւ հայ դադթականական հոսանքը մեծ մասամբ կայք հաստատած է Հալէպի մէջ, եւ այդ պատճառով ալ այս քաղաքին մէջ լրագրական եւ մշակութային գործունէութիւն ցուցաբերած:

Սուրիահայ լրագրութեան անդրադառնալէ առաջ՝ անհրաժեշտ կը նկատենք ակնարկ մը նետել դադութին անցեալին եւ 1915 թ.-էն ետք ունեցած թուական աճումին վրայ:

ԳԱՂՈՒԹԻՆ ԱՆՑԵԱԼԸ

Հայերու՝ Սուրիոյ մէջ բնակութիւնը ունի դարերու պատմութիւն: Կիլիկիոյ հայկական իշխանութեան ժամանակաշրջանէն իսկ Հալէպը եղած է հայ վաճառականներու, ուխտաւորներու եւ եկեղեցականներու համար կարեւոր հանգրուան մը: Հալէպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին կը յիշատակուի ԺԵ. դարէն: Հալէպ եղած է վաճառաչաճ քաղաք եւ հայ վաճառականներ կանուխէն կայք հաստատած են հոն: Ան ընդունած է այցելութիւնը Կիլիկիոյ կաթողիկոսներուն եւ նոյնիսկ անպաշտօն աթոռանիստի դերը կատարած է: Սակայն ԺԹ. դարուն վերջն է որ հայութեան թիւը հետզհետէ աճում մը կ'արձանագրէ՝ Օսմ. Կայսրութեան հայկական դաւառներու անտանելի կացութեան պատճառով: Այդ աճումը կարելի էր ստեղծէ ազգային դպրոցի մը, որ 1897 թ.-ին արդէն նոր հիմերու վրայ կը կազմակերպուի:

Այս դարուն հայութեան թիւը նկատառելի պէտք է ըլլար,

որպէսզի Ալ Ֆուրաք պետական պաշտօնաթերթը լոյս տեսնէր նաեւ հայերէն բաժինով (1869-1870 թթ.):

1915 թ.էն առաջ տեղաւորուած հայութեան մասին խօսելով՝ Բարգէն Եպս. Կիւլէսէրեան կը գրէ.

«Հայէպի հայ ընտելութեան մէջ գաղութային զօրաւոր երեք տարրեր կան: Մին՝ Արեւելեան վաճառականը. այսինքն՝ Ջուլա-յեցի Հայեր, որոնք Հայէպի, Կ. Պոլսոյ եւ Անատոլիոյ ուրիշ վաճառաւոր քաղաքներու մէջ բռնած էին առեւտրական հրապարակը:

«Երկրորդ՝ Տիարպէթիւրցիք եւ Մերտինցիք, Միջագետքի ներկայացուցիչներ, որոնք դարձեալ առեւտրական նպատակով պանդըխտած են Հայէպ եւ մեծ մասը տեղաւորուած: Իսկ երկրորդը՝ Սասունցիք, պէֆեար ըստածներ, որոնք ձեռք առած են ջաղացները եւ փուռերը»(1):

1918 թ.էն առաջ ի՞նչ կը ներկայացնէր հայոց թիւը Հայէպի մէջ: Ժ. Ա. Պապիկեան, որ 1925 թ.ին Սուրիոյ հայութեան թիւին կ'անդրադառնայ, շուրջ 10,000 կը հաշուէ Հայէպի մէջ՝ տեղացի կամ տեղաւորուած հայութեան թիւը: Կը մէջբերենք իր հաստատումները.

«Սուրիոյ հայութեան 50-55,000-ը կը գտնուի միմիայն Հայէպի մէջ, որով ան եղած է այժմ Սուրիոյ, ինչպէս նաեւ արտասահմանի ամենահայաշատ կեդրոնը: Այս ստուար զանդուածին մօտաւորապէս 5,000-ը Հայ Բողոքական են (500-ը տեղացի, 4,500-ը դաղթական), 10,000-ը Հայ Կաթոլիկ (կէսը տեղացի, կէսը դաղթական), իսկ 35,000-ը Հայ Լուսաւորչական (4-5,000-ը տեղացի, մնացեալը դաղթական):

«Այս հսկայ հայ դաղթականութեան կարեւոր մի մասը՝ Թուրքիոյ 120 տարրեր քաղաքներէն դաղթած եւ հաստատուած է 1915 թ.էն ետք, մանաւանդ 1921 թ.ի վերջերը Կիլիկիոյ պարպուածէն ետք»(2):

1918 թ.էն առաջ լրագրական եւ տպագրական գետնի վրայ դրեթէ անապատ մըն է Հայէպը: Տեղական ուժեր չկան մտաւորական շարժում մը ստեղծելու համար: Որպէս մտաւորական հետաքրքրութիւններ ունեցող անձեր կը յիշատակուին Իսկէնտէր Գարահանը՝ աշխատակից Պոլսոյ Բիւզանդիոնին եւ Գաբրիէլ Պանճեանը՝ աշխատակից Իգմիրի Արեւիլեան Մամուլին: Իսկ եղած հրա-

1) «Հայէպ», Սուրիահայ Տարեցոյց, պատրաստեցին Մ. Անէմեան, Մ. Միսեռեան, Ե. Ոսկերիչեան, Ա. տաքի, 1924, էջ 4:

2) «Սուրիոյ հայութիւնը», Հայաստանի Կոչակ, Ին. տաքի, ք. 50 (Դեկտ. 12, 1925), էջ 1475-6:

տարակուսիւններէն՝ Հալէպի առաջնորդական փոխանորդ Արժ. Տ. Յարութիւն Ա. Քհնյ. Եսայեանի «Արգահատելիներ կամ Հայ Տէրպապանները» (1908 թ.) եւ Հալէպի առաջնորդ Գերշ. Տ. Ներսէս Եպսկ. Դանիէլեանի «Կաթիլ մը ջուր ալրած սրտերուն» (1909 թ.) (3):

Այս հրատարակութիւնները ո՞ր տպարանէն լոյս տեսած են՝ մեզի համար կը մնայ անծանօթ: 1918 թ.ին կը յիշատակուի Աճէմեան եղբայրներու տպարան Սէպաթը, որմէ հայերէն տառեր դնելով կը սկսի լոյս տեսնել Ս. Կէպէնլեանի Հայ Զայն թերթը: Արդեօք այս տպարանը դոյուսթիւն ունէ՞ր արդէն 1908 թ.ին, Տ. Յարութիւն Քհնյ.ի գրքոյկը լոյս ընծայելու համար: Որոշ պատասխան չունինք:

Որպէս մամուլի փորձ մեզի ծանօթ է Ալ Ֆուրաքի հրատարակութիւնը (1869 թ.) եւ Աղբիւր Պատանեկան Միութեան Աղբիւր (1913-14 թթ.) ձեռագիր թերթը:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ 1918-1921 թթ.

1915-1918 թթ. Սուրիոյ անապատները կը դառնան Հայ տարագրեալներու դերեղմանները: 1918 թ.ի ղինադադարին հետեւանքով Հայ խլեակները հետզհետէ ապաստան կը գտնեն Հալէպի մէջ, այնպէս որ 80-90 հազար հայութիւն մը մէկտեղուած կը գտնենք հոն(4): Այս հայութիւնը ի՞նչ տաղնապներ կ'ապրէր:

1) Աշխատանքի հարց: Կոտորակուած եւ իրենց պապենական ծառանդութիւնը կորսնցուցած հայու բեկորները չոր հացի կարօտը բռնէին իրենց Փիղիքական դոյուսթիւնը ապահովելու համար: Գործ հայթայթելու հեռանկարով կը ստեղծուէր Աշխատանքի Տուն անունով հաստատութիւն մը՝ իր մնայուն քարտուղարով եւ վարչական խորհուրդով: Այս գրասենեակը կ'արձանագրէր դործազուրկներու անունները եւ հետամուտ կ'ըլլար գործ հայթայթել անոնց:

2) Ուսման հարց: Սուրիոյ անապատներուն մէջ հասակ նետած Հայ պատանի-պատանուհիները՝ տարիներու ընթացքին կորսնցուցած էին իրենց մայրենի լեզուին ծանօթութիւնը եւ կը խօսէին թրքերէն, քիւրտերէն ու արաբերէն: Հայ դպրոցներու բա-

3) Եղուարդ Ոսկերչեան, «Սուրիահայ գրականութիւնը եւ գեղարուեստը», Կրթատիրաց, Ա. տարի, 1926, Յունիս, ք. 8, էջ 121:

4) Սեդրակ Կէպէնլեան, «Կիլիկիան հայ դէմքեր», Պայթար հանգէս ազգային, գրական եւ տնտեսական, 1931, Սեպտ., էջ 33:

ցումը անհրաժեշտ էր՝ մայրենի լեզուին վերստացումը ապահովելու համար:

3) Ներգաղթի հարց: Դաշնակից Պետութիւններու յաղթանակը՝ հայութեան բռնադրաւուած հողերուն վերստացման յոյսը կը բերէր: Տեղահանուած եւ տարագրուած հայութեան բեկորները իրենց պապենական հողերը վերադառնալու յոյսով կ'ալրէին: Ներգաղթի այս գործը ծրագրուած աշխատանքի կը կարօտէր: Ներկաղթողներու ցուցակներ պատրաստել, հոգատար պետութեան ներկայացնել, ապահովել անոնց ճանապարհածախսը, եւլն.:

Վերոյիշեալ երեք հարցերը անմիջական լուծումի կը սպասէին, որուն պատճառով զանազան միութիւններ կը ստեղծուէին: Իւրաքանչիւր դաւառ կը ստեղծէր իր հայրենակցական միութիւնը, որոնց լիազօր ներկայացուցիչներու մասնակցութեամբ կը կազմուէր Միջ-Գաւառային Հայ Միութիւնը: 1918 թ.ի Դեկտ.ին Սահակ Կթղ. Հալէպ ժամանելով նշանակովի կը ստեղծէր Հայ Ազգային Միութիւնը հետեւեալ կազմով.՝ Տոքթ. Ա. Ալթունեան՝ նախագահ, Հ. Գաբրիէլ Վրդ. Գասպարեան՝ ատենապետ, Տոքթ. Խ. Պօղոսեան, Օննիկ Մաղլումեան (Պարոն), Սարգիս Գրաճեան, Յակոբ Մուրատեան, Ա. Ֆէտտալեան եւ Գր. Շահլամեան(5):

Տակաւին՝ մասնակի այլ միութիւններ ալ, ինչպէս Տիկնանց եւ Օրիորդաց, կը ստեղծուէին, բազմացնելով եղածներուն թիւը:

Վերապրողներուն մեծ մասը եթէ կը ներկայացնէր հայ միջին եւ համեստ խաւը, կար նաեւ ընտրանի դասակարգ մը: Միհրան Նաճարեան, տիգրանակերտցի ազգային մը եւ Ազգիւր թերթի խմբագիրներէն, որ 1915 թ.էն առաջ արդէն հաստատուած էր Հալէպ եւ մօտէն տեղեակ մեզ հետաքրքրող ազգային անցուղարձերուն, կը դրէ.

«Վերապրողներուն մէջ պատկառելի թիւ մը կը կազմէին նաեւ հայութեան ընտրանի դասակարգ մը, եկած ըլլալով Կ. Պոլսէն կամ արուարձաններէն, Կիրիկիոյ զանազան շրջաններէն եւ կամ ալ Տաճկահայաստանի ներքին գաւառներէն: Հայ վերապրողներու շարքին նշմարելի թիւ մը կը կազմէին միանդամայն թրքական բանակի բարձրաստիճան հայ սպաներ, բժիշկներ, դեղագործներ, անասնաբոյժներ եւ Պոլսոյ զինուորական վարժարանէն շրջանաւարտ հայ սպաներ»(6):

5) Նոյմը, էջ 34:

6) Յուշագրք (1918-1948), Պէյրութ, Տպ. Մասիս, 1949, էջ 10:

Այս ընտրանիին մեկտեղումը պատճառ կ'ըլլայ որ ստեղծուի մշակութային շարժում մը: Աշոտ Մատթեանց, Գէորգ Կառվա-
րենց, Յովհաննէս Սաչերեան Թատերական ներկայացումներ կու
տան: Բարսեղ Կանաչեան, Յ. Իւլիզեան, Վահան Պէտէլեան եւ Գ.
Սիւլեան նուազահանդէսներ կը սարքեն:

Այս եռուն գործունէութեան արձագանդող եւ զայն առաջ-
նորդելու կոչուած մամուլն ալ իր առաջին դողդոջ քայլերը կը նետէ
երբ լոյս կը տեսնեն 1918 թ.ի Նոյ.ին Սեդրակ Կէպէնլեանի Հայ
Ձայնը եւ Դեկտ.ին՝ Բենիամին Միլտոնեանի Տարագիրը:

Դէպի Կիլիկիա ներդաղթի պատճառով Հայ Ձայնն ալ պիտի
փոխադրուէր Կիլիկիա եւ պիտի շարունակէր լոյս տեսնել Առանայի
մէջ:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ 1921 Թ.ԷՆ ԵՏՔ

1921 թ.ի Դեկտ.ին կը սկսի Կիլիկիոյ պարպումը: Կիլիկիոյ
մէջ մէկտեղուած հայութիւնը կրկին ձեռք կ'առնէ գաղթականի
ցուպը: Սուրիահայութիւնը կրկին դէմ յանդիման կը դռնուի 1918
թ.ի տաղնապնդուն, որոնցմէ ամենէն հրատապը տնտեսական
հարցն էր: Աւուր հացի ապահովման հեռանկարով կը նետուի քիչ
մը ամէն ասպարէզի մէջ, բացի երկրագործութենէ: Եւ ժամանակի
ընթացքին սուրիահայութիւնը աշխատանքի ասպարէզ կը դռնէ հե-
տեւեալ մարդերուն մէջ. առեւտուր, ազատ ասպարէզներ (բժշկու-
թիւն, դեղագործութիւն եւլն.), արհեստներ, պաշտօնատարութիւն
(գլխաւորաբար պետական սպասարկութիւններու մէջ), բանուո-
րութիւն եւ այլ ծառայութիւններ:

1925 թ.ին դադութը կը հաշուէր 32 բժիշկ, 15 դեղագործ,
85 ատամնաբոյժ, 60 երկրաչափ եւ մեքենագէտ, 21 քահանայ եւ
կրօնական, 250 կրթական պաշտօնեայ, 50 կառավարատան, դրա-
մատան, վաճառատան եւ այլ պաշտօնեաներ, 250 լումայափոխ,
600 խանութպան, 160 մսավաճառ, 50 ոսկերիչ, 300 դերձակ, 650
կօշկակար, 450 հիւան, 300 երկաթագործ, 150 թիթեղագործ եւ
ձուլող, 1300 որմադիր, 850 ոստայնանկ, 350 կառապան եւ շարժա-
վար, 8000 ասեղնագործող եւ գորգագործ, 6000 բանուոր, բռնա-
կիր, սպասաւոր եւլն.: 2500-3000 կիներ՝ հին հագուստներու մաք-
րութեան եւ նորոգութեան գործով զբաղող(7):

7) Ճ. Ա. Պապիկեան, «Սուրիոյ Հայութիւնը», Հայաստանի Կոչնակ,
Ի. տարի, ք. 50 (Դեկտ. 12, 1925), էջ 1477:

Ժամանակի ընթացքին ուստայնանկութիւնը, մեքենագիտութիւնը, բամպակի եւ ցորենի մշակման մէջ դրամադուլիսի ներդրումը, հին հագուստի առեւտուրը պիտի կեդրոնանան հայոց ձեռքը: Հայուն ձեռներէց ողին պիտի ձեռնարկէ նաեւ գործարաններու հիմնումին:

Ի՞նչ էր տեղացի տարրին կեցուածքը հայ գաղթականական խուժումին եւ Սուրիոյ տնտեսական կեանքին մէջ անոր խաղացած դերին հանդէպ:

Տեղացի ժողովուրդին համար հայութեան ներկայութիւնը նոր տարրի մը յաւելումը չէր բերեր: Արդէն 1915 թ.էն առաջ տասը հազարնոց փոքրաթիւ հայ գաղութ մը գոյութիւն ունէր, սակայն տարագրութեան պատճառով այդ թիւը կը հասնէր չուրջ հարիւր հազարի: Եւ այս թիւը նկատառելի ոյժ մըն էր: Քաղաքական դեռնի վրայ հայութեան ներկայութիւնը վտանգ մը չէր ներկայացներ, սակայն տնտեսական դեռնի վրայ տարբեր էր հարցը: Հալէպ վաճառականութեան կեդրոն էր: Պատերազմը խախտած էր շատ բան: 1920-ական թուականներու Քեմալական Թուրքիոյ յարուցած մաքսային դժուարութիւնները, ինչպէս նաեւ քրտական ապստամբութիւնը կը նուազեցնէին Սուրիոյ առեւտուրի կարելիութիւնները: Հայ տարրին մէկ մասին առեւտուրով զբաղելը համակրական աչքով չէր կրնար դիտուիլ այս պայմաններուն տակ: Այդ օրերու տեղացի առեւտրականներու հոգեբանութեան մասին վկայութիւն մը կը բերէ Շաւարշ Կամսարական՝ գրելով.

«Քրիստոնեայ եւ իսլամ արաբներու հետ մեր խօսակցութեանց միջոցին, մենք յաճախ առիթ ունեցանք լսելու թէ սուրիացիք հայերու հանդէպ մասնաւոր հակակրօթիւն մը չունենալով հանդերձ, կը վախճան որ անոնք տեղական առեւտուրը իրենց ձեռքը առնեն եւ այսպէսով բոլոր սուրիացիներուն տնտեսական կործանման պատճառ դառնան: Անոնք կ'ըսեն, որ իրենք շատ ուրախ պիտի ըլլային եթէ հայերը երկրագործութեամբ զբաղէին, որուն համար Սուրիոյ մէջ ահագին ասպարէզ կայ»(8):

Դժգոհութեան ուրիշ պատճառ մըն էր հայ անհատներու հոգատար պետութեան (Ֆրանսա) բանակին մէջ ծառայելը: 1925 թ.ի Հոկտ.ի 18-ին կը պայթէր Դամասկոսի ապստամբութիւնը, որուն պատճառով հայեր ալ զոհեր կու տային եւ լքելով Դամասկոսը կ'ապաստանէին Լիբանան: 1925 թ.ին 15 հազար հաշուող Դամասկոսի

8) «Հայ Գաղթականութիւնը Սուրիոյ մէջ», Հայաստանի Կոչնակ, ԻԳ. տարի, ք. 34 (Օգ. 25, 1923), էջ 1064:

Հայ դաղութը, 1926 թ.ի Օգոստոսին Հազիւ 2,500 անձ կը հաշուէր»(9) :

Բայց այս անհասկացողութիւնները հետզհետէ կը չքանային եւ 1940-ական թուականներուն Սուրիոյ անկախութեան պայքարի օրերուն՝ հայութիւնը իր քաղաքական հասունութիւնը կը յայտնաբերէր տեղացի արաբին կողքին կանգնելով :

Սուրիոյ հայութիւնը տնտեսական գետնի վրայ մակաբոյծ չըլլալէ զատ, իր բազուկին եւ մտային կարողութիւնները ի սպաս կը դնէր Սուրիոյ տնտեսական վերելքին : Paul Baurain կը հաստատէ. «Հայ գաղթականներու ալիքը, հեռու կործանարար ալիք մը ըլլալէ, արգասաւորած է Հալէպի աշխատանքը, բերելով նոր մեթոտներ եւ կարողութիւններ. երեքտրագէտներ, ընդելուզիչներ, ճախարակիչներ, մեքենագէտներ, արուեստի եւ ճշգրտութեան աշխատանքներու աշխատաւորներ, ամէն տեսակի վարպետներ գրեթէ միմիայն անոնց մէջ կը գտնենք»(10) :

1946-1947 թուականներու դէպի Հայաստան ներգաղթը, Սուրիոյ քաղաքական անկայուն վիճակը — յաջորդական պետական հարուածներու պատճառով —, զինուորական պարտագիր ծառայութիւնը, խոշոր գործարաններու պետականացումը պատճառ կը դառնան որ հայութեան թիւը անկում կը կրէ Սուրիոյ մէջ եւ տեղ ու գործ հաստատած հայութիւնը իր աչքերը ուղղէ Լիբանան եւ հեռաւոր Ամերիկաներն ու Աւստրալիա :

Եթէ Սուրիոյ Հայ դաղութին կազմութեան եւ զայն յուզող հարցերուն լայն տեղ տուինք այս ուսումնասիրութեան սկիզբը, պատճառը այն է որ մամուլը Հայելին ըլլալով զինք ծնող Ժողովուրդին, հարազատօրէն արձագանգած է անոնց :

ՍՈՒՐԻԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԾՐՋԱՆՆԵՐԸ

Հայ մամուլը Սուրիոյ մէջ մակընթացութեան եւ տեղատուութեան շրջաններ ապրած է : Փայլուն սկզբնաւորութիւն մը (1918-1926 թթ.) ունենալէ ետք կու գայ տեղատուութեան շրջան մը (1927-1944 թթ.), վերստին փայլատակելու (1945-1963 թթ.), ապա նորէն իր մայրամուտը ապրելու համար (1963 թ.էն մինչեւ այսօր) :

9) Թղթակից, «Դամասկոսի կացութիւնը», Հայաստանի Կոչակ, ԻԶ. տարի, ք. 35 (Օգոստ. 28, 1926), էջ 1237 :

10) *Alep* (Autrefois, Aujourd'hui), Alep, Imp. Maronite, 1930, p. 241.

Մեզի համար այս վերիվայրումները իրենց պատճառները ունին, որոնց թուլումը անհրաժեշտ կը նկատենք:

Ա. շրջան, 1918-1926 թթ.

Հայ մամուլը կ'ունենայ սկզբնական փայլատակում մը, որովհետեւ հայ մեծաթիւ դաղթականութիւն մը նոր կը հաստատուի Սուրբոյ մէջ, կուսակցութիւնները հետզհետէ կը կազմակերպուին, մշակութային միութիւններ դոյութեան կը կանչուին, դպրոցներու հիմը կը դրուի: Այս բոլորին արձագանգը ըլլալու եւ ուղղութիւն տալու համար մեծ ու փոքր 17 թերթեր լոյս կը տեսնեն դաղութիւն մէջ:

Բ. շրջան, 1927-1944 թթ.

Այս տասնը ութը տարիներուն՝ կը տեսնուի թերթերու թիւի նուազում մը (10 թերթ), որովհետեւ մամուլին հիմնադրման պատասխանատու մարդիկը մեկնած են՝ այլ երկնակամարներու տակ իրենց բախտը որոնելու: Օրինակ՝ Սեդրակ Կէպէնլեան մեկնած է Կիպրոս, Բ. Միլտոնեան՝ Մարսէյ, Սարգիս Տխրունի՝ Լիբանան: Այլ մտաւորականներ ալ, որոնք պարագաներու բերումով հաստատուած էին Հալէպ, մեկնած են Յունաստան, Ֆրանսա եւ այլ երկիրներ: Եւ պատրաստ մտաւորականութիւն մը դոյութիւն չունի մամուլի ջահը վառ պահելու համար: Տեղւոյն վրայ ազգային երկրորդական դպրոցներ չկան, որպէսզի հայ նորահաս սերունդը պատրաստեն հայ գրականութեան եւ հայ մշակոյթի սպասաւորութեան: 1939 թ.ին սկսած Համալսարհային Բ. Պատերազմն ալ հաւանաբար իր որոշ դերը կրնայ կատարած ըլլալ այս շրջանի թմբիրին երկարածումն վրայ:

Բայց պէտք է ընդունիլ նաեւ որ այս նոյն շրջանին է որ հետըզհետէ պիտի կազմաւորուի այն սերունդը, որ յաջորդ շրջանին պիտի ծաղկեցնէ Սուրբոյ հայ մամուլը եւ տարածելով իր թեւերը՝ Սփիւռքի եւ հայրենիքի մշակութային դանձարանին մէջ պիտի դնէ իր լուման: Ուսումնատենչ այդ սերունդը պիտի դիմէ Երուսաղէմի Դպրեկանքը, Կիպրոսի Մեղեոնեան Հաստատութիւնը, Պէյրութի Ամերիկեան եւ Ֆրանսական Համալսարանները եւ գիտութեամբ լեցուած՝ պիտի սպասարկէ իր ժողովուրդին:

Գ. շրջան, 1945-1963 թթ.

Համալսարհային Բ. Պատերազմին վախճանը, Հայկական Հարցին արծարծումն ու ներդաղթը խթան պիտի ըլլան նոր թերթերու հիմնադրման: 1945-1946 թթ. երկու տարուան ընթացքին լոյս պիտի տեսնեն 9 թերթեր, իսկ 1945-1963 թթ.՝ 26 թերթեր:

Այս շրջանին է որ պիտի հիմնուին հայկական երկրորդական վարժարանները՝ Քարէն Նիսիէ Ազգ. Ճեմարան (1947 թ.), Լազար Նաճարեան Ճեմարան (1954 թ.) :

Բայց նաեւ այս շրջանին պիտի պատահին դէպքեր, որոնք պիտի նուազեցնեն սուրիահայ գաղութին թիւը եւ պիտի նօսրացնեն հայ մտաւորականութեան շարքերը :

ա) Ներգաղթը, որ պիտի զրկէր գաղութը կարգ մը գրողներէ — Արիս Շաքլեան, Արամ Արման, Անդրանիկ Թերզեան, Սարգիս Նաիրուհեան, Ստեփան Ալաճաճեան :

բ) Սուրիոյ քաղաքական պայմանները, մանաւանդ յաջորդական պետական հարուածները, պատճառ պիտի ըլլային նոր արտագաղթի :

գ) Տեղւոյն վրայ անուանի համալսարանի մը չգոյութիւնը, որ երիտասարդութիւնը պիտի մղէր ալլուր, մանաւանդ Պէյրութի մէջ փնտռելու իր ուսման տենչին յազեցումը. եւ ուսման աւարտէն ետք հաստատուելու հոն, կամ մեկնելու հեռաւոր Ամերիկաները : Այս է պարագան Զարեհ Մելքոնեանի, Անդրանիկ Փոլատեանի, Լեւոն Վարդանի եւ դեռ բազմաթիւ ուրիշներու :

դ) Լիբանանի մշակութային եւ տնտեսական բարգաւաճումը, որ իրեն պիտի քաշէր արդէն կազմաւորուած գրողներ, ինչպէս Ա. Ծառուկեան, Ս. Սիմոնեան, Օ. Սարգիսեան :

Այս պատճառները թոյլ պիտի չտային որ ուսումնաւարտ երիտասարդութիւնը մէկտեղուէր Սուրիոյ մէջ եւ ստեղծուէր մշակութային եւ լրագրական հետաքրքրութիւն : Սուրիոյ գաղութը չի ծոցէն պիտի ծնէր բազմաթիւ գրողներ եւ ազգային գործիչներ, որոնք պատուարեր դործունէութիւն պիտի ցուցարբերէին սփիւռքի եւ Հայաստանի մէջ եւ սակայն, պայմաններու բերումով հեռու պիտի մնային սուրիահայ մշակութային կեանքէն :

ՀԱՅ ԹԵՐԹԸ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՂԸ

Փօլ Պորէն, Հալէպի մամուլին անդրադառնալով կը գրէ. «Հալէպ կը հաշուէ երկվեցեակ մը տպարաններ :... Այս տպարաններէն լոյս կը տեսնեն երկվեցեակ մը թերթեր, որոնցմէ մէկը Ֆըրանսերէնով, մէկը՝ հայերէնով, մէկը՝ թրքերէնով, երկուքը՝ թրքերէն-արաբերէնով եւ միւսները՝ արաբերէնով : Հալէպի մէջ մարդիկ քիչ կը կարդան. ամենէն շատ տպաքանակը 800 օրինակը Հանցնիր, եւ տակաւին ոչ-օրական, ինչ որ մտածել կու տայ 200 հազար ընկնելովն ունեցող քաղաքի մը համար»(11) :

Տիգրան Փիրանեան, 1920-ական թուականներու սուրիահայ հրապարակագիրներէն, անդրադառնալով նոյն հարցին՝ կը գրէ. «Ամօթ է, որ ըսեմ թէ 35,000 հայութեան մը մէջ կը շրջաբերին միայն 600-ի չափ տեղական եւ արտասահմանեան հայ թերթեր, ազագուն թիւ մը, որ սակայն կը դիեցնէ քանի մը պատիկ օթլախի ընթերցողներ: Ասիկա շատ ցաւոտ ու թարախոտ հիւանդութիւն մ'է»(12):

Տարօրինակ երեւոյթ չէր պարզուածը: Հալէպ հաւաքուած հայ գաղթականներու մեծ մասը զուրկ էր տարրական կրթութենէ մը: Իրենց օրապահիլը դժուարաւ ապահովող հայ աշխատաւորն ու զործաւորը յաւելեալ դրամը չունէին մամուլի յատկացնելու: Զմոռնանք տակաւին՝ որ հայ ժողովուրդին մեծ մասը բաժանորդ կ'արձանագրուի կամ կը գնէ իր համակրած կամ պատկանած կուսակցութեան թերթը: Եւ այդ օրերուն՝ Հալէպի մէջ հրատարակուող միակ երկօրեան՝ Սփրատն էր՝ ռամկավար թեքում ունեցող: Հետզհետէ պահանջը պիտի զգացուէր ընթերցումի, շնորհիւ հայ վարժարաններու շրջանաւարտներուն եւ տնտեսական կեանքի բարելաման:



Լիբանանահայ մամուլին նուիրուած մեր ուսումնասիրութեան մէջ, որ լոյս տեսաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի Բ. հատորին (1971) մէջ, ընթացած էինք տասնամեակներու բաժանումով: Իւրաքանչիւր տասնամեակի գլխաւոր հարցերուն եւ իրագործումներուն անդրադառնալէ ետք, տուած էինք այդ տասնամեակի գլխաւոր թերթերն ու անոնց արժանիքները: Այս տարի կը խուսափինք նոյն մեթոտը որդեգրելէ, որովհետեւ արդիւնքը պիտի ըլլար կրկնութիւն: Սուրիոյ եւ Լիբանանի հայութիւնը նոյն հարցերը դիմակալած է եւ գրեթէ նոյն լուծումները տուած:

Սուրիահայ մամուլին անդրադառնալու ատեն կ'որդեգրենք ժամանակագրական կարգը, մասնաւոր յիշատակութեան եւ դատումի արժանացնելով այն թերթերը, որոնք կա'մ երկարատեւ կեանք ունեցած են, կամ՝ յիշատակութեան արժանի գործունէութիւն ցույցաբերած:

Վերջաւորութեան պիտի յիշատակենք սուրիահայ մամուլին մեծ ու փոքր բոլոր ներկայացուցիչները՝ այբուբենական կարգով:

12) «Հալիպահայ տարիք, 1927-1928», Սուրիահայ տարեգիրք, 1929, Խմբ. Հայկ Պալեան, էջ 199:

Ալ Ֆոլիւթ (Եփրատը) : 1869-1870 թթ. : Հալէպի կուսակալութեան պաշտօնաթերթ : Այս թերթին մասին Ատիպ Մըրուէ կը գրէ. «Սուրիոյ թերթերէն երկրորդն էր Ղատիր Ալ Ֆուրաթը (Եփրատ գետը — Ա. Տ. Խ.), որ լոյս կը տեսնէր Հալէպի մէջ 1867 թ.էն սկսեալ : Հալէպի կուսակալութեան պաշտօնաթերթն էր, որ երկու տարի լոյս ընծայուելէ ետք իր տեղը տուաւ Ալ Ֆուրաթին, որ իր առաջին տարիներուն կը հրատարակուէր արաբերէն, թրքերէն եւ հայերէն, ապա՝ միայն առաջին երկու լեզուներով» (13) :

Մեզի անյայտ է թէ ինչ պարագաներու տակ լոյս ընծայուած է հայերէն բաժինը եւ ձիւղ քանի՞ տարի տեւած : Բաղմալեզու պաշտօնաթերթի մը հրատարակումը իր նախընթացը ունէր Պոլսոյ մէջ : Օսմ. Կայսրութեան պաշտօնաթերթը, որ սկսած էր լոյս տեսնել 1832 թ.ին, Փրանսերէնի, թրքերէնի կողքին, ունէր հայերէնով լոյս տեսնող առանձին հրատարակութիւն մը՝ Լըռյ Գիթ Մեծի Տէրաքեանն Օսմանեան անունով : Թերեւս նկատի ունենալով հայ գաղութի մը ներկայութիւնը Հալէպի մէջ, յարմար դատուած էր որ պաշտօնաթերթը լոյս տեսնէր հայերէնով ալ :

Ալ Բիտի : Ամսաթերթ, ապա՝ պարբերաթերթ : Հալէպ, 1913-1914 թթ. : Մեզի ծանօթ սուրիահայ մամուլի երախայրիքը, որ լոյս տեսած է հայ մարդոց նախաձեռնութեամբ, եթէ նկատի չունենանք Ալ Ֆուրաթը, որ պետական հրատարակութիւն էր :

Լոյս տեսած է 9 թիւ. առաջին 4-ը ամսաթերթ, իսկ մնացեալ 5-ը՝ պարբերաթերթ : Օրկան Աղբիւր Միութեան : Միութիւնը Աղբիւր անուանուած է ի յիշատակ Աղբիւր Սերոբի : Զուտ մշակութային միութիւն մը՝ իր առանձին ծրագիր կանոնադրով :

Միութեան հիմնադիրներն են եղած՝ Միհրան Նաճարեան (ողջ, Պէյրութ), Երուանդ Մալխասեան (մեռած), Լեւոն Աբգարեան (մեռած), Վահան Թամզարեան (մեռած), Խաչիկ Յակոբեան (ողջ : Ներկայիս քահանայ — Միացեալ Նահանգներ) :

Աղբիւր խմորատիպ թերթը խմբագրած են Միհրան Նաճարեան (այդ շրջանին՝ անկախ) եւ Սարգիս Սիրանոսեան (դաշնակցական) : Աշխատակից՝ Խաչիկ Յակոբեան :

Բովանդակութիւն՝ մեծ մասով արտատպում :

Առաջին Համաշխարհային Պատերազմի բռնկումով կը դադրի թերթը : Երկրորդ պատճառ մը դադարման՝ Դաշնակցութիւնը կ'ուզէ հակադէմ Միութիւնն ու անոր օրկանը :

13) Արաբական Մամուլը (արաբերէնով), Պէյրութ, 84. Պէյրութ, 1981.

ՀԱՅ ԶԱՅՆ: Սուբիաճայ մամուլի տպագիր առաջին թերթը: Սկսած է լոյս տեսնել 1918 թ.ի Նոյ.ի 13-ին, Անգլիացիներու Հալէպի գրաւումէն (Հոկտ.ի 26) հազիւ երեք շաբաթ անցած: Ազատութեան վերադարձէն ետք հայ մտաւորականութեան մնացորդացը ձեռք կ'առնէր իր ժողովուրդին առաջնորդութեան դերը:

Թերթը մեծ մասամբ կ'անդրադառնայ հայ գաղթականներու վիճակին, անոնց իտէալներուն, հայկական հողային պահանջներուն, օտար տէրութեանց հայանպաստ արտայայտութիւններուն: Սուբիոյ հողին վրայ հայ գաղթականներուն կայքը ժամանակաւոր կը նկատուէր: Դաշնակից պետութեանց յաղթանակին մէջ հայութիւնը կը տեսնէր նաեւ իր յաղթանակը. որովհետեւ թէ՛ Կովկասի եւ թէ՛ արեւմտեան ճակատներուն վրայ՝ հայութիւնը թափած էր իր արիւնը եւ կը սպասէր որ Օսմանեան Կայսրութեան անգամահատումով ստեղծուէր Մեծ Հայաստանը, մանաւանդ Կիլիկիան տրուէր հայոց. եւ Սուբիոյ հայութիւնը, որ մեծ մասով կազմուած էր կիլիկեցի հայերէ, վերադառնար իր երկիրը եւ սկսէր շինարար աշխատանքի:

Հայ Զայնը լոյս կը տեսնէր որպէս փոքրածաւալ օրաթերթ, երկու էջով, տէր եւ տնօրէնութեամբ Սեդրակ Կէպէնլեանի: Մարտիրոս Տէր Ստեփանեան 100 Օսմանեան ոսկի տրամադրելով Յովսէփ եւ Միշէլ Աճէմեան եղբայրներէն գնած էր տպարան մը, եւ տրամադրած՝ Ս. Կէպէնլեանի: Խմբագրատունն ու տպարանը կը գտնուէին նոյն տան մէջ, Ճիտէյտիէ, Զէպալ փողոց:

Թերթին կ'աշխատակցէին Ռեբեկա Կէպէնլեան, Մարտիրոս Տէր Ստեփանեան, Միհրան Տէր Ստեփանեան, Վահան Պէյլէրեան, Արամ Գիտակից, եւ ուրիշներ:

Երբ գաղթը կը սկսէր դէպի Կիլիկիա, Հայ Զայնն ալ կը փոխադրուէր Ատանա եւ լոյս կը տեսնէր որպէս պաշտօնական օրկանը Ռամկավար Կուսակցութեան Կիլիկիոյ Շրջանային Վարչութեան:

Ս. Կէպէնլեան հետագային պիտի ըլլայ Հալէպի Եփրատ թերթի խմբագիրներէն (1930-1931 թթ.) եւ Կիպրոս հաստատուելով՝ պիտի հիմնէ տպարան, ուրկէ լոյս պիտի ընծայէ Յեմարամ անունով փոքրածաւալ, 2 էջով շաբաթաթերթ մը (1959-1962 թթ.):

ԱԺԱՆՍ ՌԻԻԹԻՐ (Թարգմանաբար): Հալէպ: Սկսած է 1918 թ.ի Նոյ.ին: Տպագր. Մէարըֆ: Պատասխանատու Ս. Մեհնունի:

Շատ հետաքրքրական հրատարակութիւն մը: Ունի նամակի թուղթի մեծութիւն եւ թուղթի սղութեան թէ՛ այլ պատճառով, հրատարակիչը օգտագործած է որեւէ տեսակի թուղթ: Պատասխանատուին՝ մտահոգութիւնն է եղած Ռեթէր լրատու գործակալութեան գլխաւոր լուրերը ամփոփ գիծերու մէջ հաղորդել հայ ընթեր-

ցող հասարակութեան: Եղած է օրական հրատարակութիւն. կը խուսափինք զայն օրաթերթ որակելէ:

Ունինք չորս թիւ, որոնցմէ վերջինը կը կրէ թիւ 33 (Դեկտ. 13, 1918):

ՏԱՐԱԳԻՐ: Օրաթերթ: Բաղաքական-գրական-ընկերային: Հալէպ, 1918 Դեկտ.—1919 թթ.: Տպ. Մարօնի: Արտօնատէր՝ Բենիամին Միլտոնեան, խմբագիր՝ Յովհաննէս Սալեմեան:

Տեսած ենք այս թերթէն միայն մէկ թիւ (Ա. տարի թիւ 19, 16 Յունուարի, 1919 թ.): Ա. էջը կը պարունակէ երկու յօդուած. ա) «Ընդլայնենք շրջանակը եւ կրկնենք», որուն մէջ կը թելադրուի Սէպիլի զօրանոցին մէջ հաւաքուած որբերուն եւ այրիներուն օժանդակութեան հասնիլ. բ) «Կաղանդի գիշերը (Բանտին մէջ)», յօդուածագիր՝ Մատթէոս Երէցեան:

Այս մէկ թիւը բաւարար չէ դատում մը կատարելու համար: Թերթը կարճ կեանք պիտի ունենար եւ Բենիամին Միլտոնեան պիտի մեկնէր Ֆրանսա:

ԳԱՂԹԱԿԱՆ: Հալէպ, 1918 թ.: Ձեռագիր, երկու էջ, նամակի թուղթի մեծութեամբ: Լոյս տեսած է 3-4 թիւ(14): Հրատարակութիւնը պատահականութեան կապուած: Տպաքանակ՝ մէկ օրինակ, փակցուած Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ պատին, որպէսզի հասարակութիւնը կարդայ: Բովանդակութիւն — օրուան ազգ. անցուղարձերու եւ տարադիրներու վրայ կատարուած զեղծարարութիւններ: Այս պատճառով ալ դադրեցուած եկեղեցւոյ իշխանութեան կողմէ:

Որպէս մականիշ-զարդ ունեցած է քանի մը վրաններ եւ դադրականներ:

Հրատարակողներ՝ Գրիգոր Անդութ (Եբրանոսեան), Մատթէոս Երէցեան, Սալիկ Ինկիլիդեան, Գէորգ Ձէքիճեան:

ԵՓՐԱՏ: Բաղաքական լրագիր: Եռօրեայ: 1919 թ.: Լոյս տեսած է չորս թիւ: խմբագիրներ՝ Տոքթ. Գ. Մուշեան, Վարդ-Մեխակ, Միհրան Ս. Նաճարեան, Հ. Տօլպազեան, Մ. Պատմաճեան: Լոյս տեսած է Սէպաթ տպարանէն:

Այս լրագրին տպագրութեան տարեթիւն ու քանակը անորոշ են: Միհրան Ս. Սէֆէրեան կը նշէ 1918 թ.(15), իսկ Ե. Ոսկերիչ-

14) Եղուարդ Ոսկերիչեան կը գրէ. «մօտ 100 քիւ» եւ որպէս խմբագիր կը յիշատակէ Գ. Անգուրի կողքին վ. Սերոբեանը: Մեմֆ մեր տեղեկութիւնները քաղած ենք Մատթէոս Երէցեանէն:

15) Հնչակեան Մատեան, Գ. Գրառիչ, Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան պրօպագանդ-քարոզչական դործունէութիւնը, Պէյրութ, 1964, էջ 93:

եան՝ 1920 թ.(16) եւ տպուած չորս թիւ: Միհրան Նաճարեան՝ 1919 թ.ի սկիզբը եւ տպուած ութը թիւ(17): Թերթին հաւաքածուն ձեռքի տակ չունենալով՝ անկարելի է մեզի համար այս անելէն դուրս գալ:

Եփրատի հրատարակութիւնը՝ Հնչակեան կուսակցութեան Սուրբոյ հայ գաղութի մամուլին մէջ ունենալիք իր դործունէութեան նախաքայլը կը կազմէ, որուն պիտի յաջորդէ եռուն դործութեան շէնթիւն մը: Հայ քաղաքական երեք կուսակցութիւններէն՝ Հնչակեան, Ռամկավար և Դաշնակցական, առաջինը, ամենէն զօրեղը և կազմակերպուածը կը ներկայանայ Սուրբոյ յետ-պատերազմեան դաշութին մէջ: Մամուլի լայն գործունէութիւնը ատոր փաստն է: 1922 թ.ին պիտի սկսի հրատարակուիլ Հնչակեաններու Սուրբալիամ Մամուլը, 1923 թ.ին Գիտակամ Շարժումը, 1925 թ.ին Սուրբալիամ Մամուլի ուսանողական բաժինը, 1923 թ.ին Մեղու երգիծաթերթը: 1927 թ.ին կարծէք կը չիլի Հնչակեաններու ազդեցութիւնը եւ Ռամկավար կուսակցութիւնն է որ զեկը ձեռք կ'առնէ Եփրատի հրատարակութեամբ: Դաշնակցութիւնը իր ներկայութիւնը պիտի յայտնէր 1946 թ.ին, երբ լոյս պիտի տեսնէր Արեւիք օրաթերթը:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ: Օրաթերթ: Օրկան Ս. Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան: Հալէպ, 1922-1927 թթ.: Արտօնատէր՝ Հայկ Թորոսեան, պատ. տնօրէն՝ Տիգրան Երէցեան: Խմբագիրներ՝ Տոքթ. Գ. Մուշեան, Շաւարշ Շիշմանեան, Վարդ-Մելիսի, Գէորդ Նալպանտեան, Եղուարդ Ոսկերիչեան եւ Ս. Տիրունի (Սարգիս Բէտէրեան):

Անունով օրաթերթ, սակայն իրականութեան մէջ՝ երկօրեայ: 1925 թ.ի Մարտին լոյս պիտի ընծայէ ուսանողական բաժին մը, ամսաթերթի ձեւով, որուն առանձին կ'անդրադառնանք:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ (Ուսանողական բաժին): Ամսաթերթ: 1925 Մարտ 16-1926 Սեպտ. թթ.: Լոյս տեսած է 16 թիւ: Խմբագրապետ՝ Ս. Տիրունի, վարչութիւն՝ Ղուրպէթ (Խաչիկ Գասպարեան): Գլխաւոր աշխատակիցներ՝ Ղուրպէթ, Անդրանիկ Կէնճեան, Ս. Սապահ-Գիւլեան, Միհրան Սէֆէրեան, Վշտունի, Զգօն-Սեպուհ (Եղուարդ Ոսկերիչեան):

Երազրին մէջ կը յայտարարուի. «Ուսանողական բաժին»ի մէջ գոյութիւն չունի քաղաքական կեանքը. հոն պիտի հիւրըն-

16) Նոյնը, էջ 122:

17) «Սուրբալիայ Լրագրաւթիւմը», Բաղժափէպ, 1926, ք. 10, Հոկտ.,

կալուին դիտական, ընկերային, ընկերաբանական հարցերը շօշափող լուրջ յօդուածներ, ինչպէս նաեւ մայր-Հայաստանի տնտեսական-մշակութային կեանքը պատկերացնող գրութիւններ եւ տեղեկութիւններ»:

Ուսանողութիւնը, իմա՝ աշակերտութիւնը դրեթէ բացակայ է այս ամսաթերթին մէջ: Հնչական կազմաւորուած մտաւորականութիւնն է որ լոյս ընծայած է դայն, նորահաս սերունդին մէջ իր գաղափարախօսութիւնը տարածելու համար:

ՄԵՂՈՒ: Ազգային, դրական եւ երգիծական: Խմբաւորուած ամսաթերթ, զարդարուած երգիծանկարներով: Սկսած է լոյս տեսնել (Հալէպ), 1923 թ.ի Հոկտ.ին եւ տեւած մինչեւ 1925 թ.ի Մարտ (այսքանը ծանօթ է մեզի):

1925 թ.ի Փետր.—Մարտ միացեալ թիւի խմբագրականին մէջ խմբագրութիւնը անդրադառնալով թերթին «կտրած ճամբուն», կը յայտնէ. «Յաւակնութիւնը չունինք մեծ խոստումներով եւ փայլուն լիբրատուութեամբ շլացնել հետաքրքրուող հասարակութիւնը. եւ ո՛չ ալ խնդալու եւ դրօսանքի նիւթ հայթայթել. այլ, մեր դառնօրէն ծիծաղելի կացութիւնը եւ ազգային կեանքը դէպի խաթարում տանող պարագաները իրենց խկական դոյներով ներկայացնել հանրութեան»:

Մածկանուններու ետին աստատանածներէն՝ Ս. Տիգրան, Զ. Բար, Մանուկ Հայրիկեան, Ա. Տալիւ, Ռ. Լ., Ա. Անանուն, Իրադեկ — կարելի չէ դիտնալ թէ որո՞նք եղած են խմբագիրներն ու աշխատակիցները(18): Որոշ է որ պատուաբեր դործ կատարած են: Անաչառ մօտեցումով քննադատած են հայ կեանքի յոռի կողմերը: Իրենց թիրախը ըրած են հայ քաղաքական կուսակցութեանց իրերամերժ ընթացքը, հայ կեանքը ղեկավարելու անոնց մարմաջը, եկեղեցական եւ ազգային դէմքեր, եւլն.:

Սուրիոյ հայ դաղութը 1920—ական թուականներուն քառասային վիճակ մը կը ներկայացնէր: Թուրքիոյ հայաբնակ մնացորդացին Սուրիոյ մէջ մէկտեղումը՝ իր խայտառղէտ դաւաճաբարբառներով, բարձրով եւ մտածելակերպով, եւ հայ քաղաքական կուսակցութեանց բուռն պայքարը այդ մնացորդացին ղեկավարութիւնը ըստանձնելու, առատ նիւթ կրնային հայթայթել երգիծական թերթի

18) Պրմ. Գրիգոր Պօղարեան, որ Հալեպահայութեան յետ-պատերազման կեանքին քաջածանօթ ամս մըն է, մեզի յայտնեց որ Մեղուի հրատարակութեան գլխաւոր խմբագիրներն ու աշխատակիցները եղած են՝ Բիւզանդ Թօփալեան, Աւետիս Տէր Սահակեան, Անդրանիկ Պիւլպիւլեան, Մովսէս Մերքիսեան (Մօրիս Գալեան):

մը: Դժբախտութիւն է որ այս երգիծաթերթը սուրիահայ մամուլին մէջ կը ներկայանայ որպէս միակ ներկայացուցիչը իր սեռին:

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ: Ամսաթերթ: Գիտական, տնտեսական, ընկերարանական, գրական, բժշկական, կրթական եւ գիւղատնտեսական: Հալէպ, 1923 թ.ի Յունիս-Նոյեմբեր, 6 թիւ: Խմբ.՝ Վարդ Մեխակ (Վարդեվառ Գարանֆիլեան):

Մեծ ծրագիրներով լոյս ընծայուած թերթ մը. «Տալ այնպիսի գրական հատուածներ, որոնց իմաստը կամ ներշնչումը եղած է ճնշուած մարդկութեան՝ եւ ի մասնաւորի հայութեան տառապակոծ ցաւերը»:

Գիտական պիտակը այստեղ նպատակ չունի բնական դիտութիւնները, այլ՝ ընկերային դիտութիւնները, ի մասնաւորի ընկերարանութիւն, իմաստասիրութիւն, եւլն.:

Էսպէս հնչական թերթ, որուն աշխատակցած են Տոքթ. Գրիգոր Մուշեան, Անդրանիկ Կէնճեան, Հմայեակ Տօլպազեան, Ֆիրուզ Խանդատեան, Մատթէոս Երէցեան, Փրոֆ. Յովհաննէս Նազարեան, Գէորգ Պապոյեան, եւլն.:

ԵՓՐԱՏ: Քաղաքական, գրական եւ գիտական: Հալէպ, 1927-1949 թթ.: Անհրաժեշտ կը նկատենք որոշ մանրամասնութեամբ անդրադառնալ այս թերթին, որովհետեւ շուրջ երկու տասնամեակ սուրիահայ քաղաքական եւ ազգային միակ թերթն է եղած:

Սկսած է լոյս տեսնել 1927 թ.ի Յունիս 6-ին իբրեւ եօթեայ, Եփրատ Հրատարակչական Ընկերութեան կողմէ, արտօնատիրութեամբ Եղիազար Պէնլեանի, եւ պատասխանատու տնօրէնութեամբ՝ Տոքթ. Խաչիկ Պօղոսեանի:

1936-1937 թթ.ուն կը դառնայ երկօրեայ, 1937-1939 թթ.ուն՝ չաբաթաթերթ, իսկ 1939-1949 թթ.ուն՝ օրաթերթ:

1929 թ.ին թերթին մատակարարութիւնը պաշտօնապէս կ'անցնի Ռամկավար-Աղատական կուսակցութեան: 1934-1935 թթ.ուն՝ արտօնատէր Եղիազար Պէնլեան կը հրատարակէ իբրեւ իր սեփականութիւնը, ի'ր խմբագրութեամբ:

Իր գոյութեան ընթացքին ունեցած է խմբագիրներու փառանդ մը. զանոնք կը յիշատակենք իրենց յաջորդականութեամբ:

1927 թ.ին թերթը ունեցած է խմբագրական մարմին մը, որուն անդամները եղած են Տոքթ. Խ. Պօղոսեան, Նազարէթ Ֆրանթիսկեան, Համբարձում Պէրպէրեան, Վարիչ Խմբագիր ունենալով Տիգրան Փիլանեանը:

Այնուհետեւ թերթը խմբագրած են Խաչիկ Պ. Քարտաշ, Արիս Շաքիեան, Սեդրակ Կէպէնլեան, Մատթէոս Երէցեան, Յովսէփ Յովսէփեան, Էլի Նազար, Մարտիրոս Տէր Ստեփանեան:

Ա Ճ Ա Ն Ս Ռ Ի Ի Թ Է Ր

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ

8, 12, 18. Անգլիական նաւերը յանձն առին ամբողջական. գործառնութիւնները Սև Ենպուն միջև հաշտութեան վերջանալը:

Այս հոլիստի մէջ Պատրիկ Գաթուս ամբամանակեայ փերպով գրաւուեցաւ:

Էմիր Փայսայ կայցելէ Մէքք:

Մեծն Բրիտանիա եւ իր իշխանութեան երկիրները կը պահանջեն Սախկին Դերման կայսրութենէ իր տուգանք 8 երկիւիսն Անգլ. ոսկի:

Դերման կառավարութիւնը հաւանութիւն չի ցուցներ կայսրի եւ կայսերազունի յանձնաւ խնդրի շուրջ:

ՔԻԼԻՍ ԵՒ ՃԱՐԱՊԼՈՒՍ ՊԱՐՊՈՒԱԾ. ԵՒ ԱՅՆԹԱՊ

Էյ Արապ կը գրէ, Օսմանցիները պարպեցին Գիլիսը եւ ճարապուսը:

(Այնքապէն եկած շուրերը կը հաւաստեն ի մօտոյ Այնքապի ալ պարպումը):

Փարիզ. 1. Մ. Բիշմանսո, Սիմիօր Օրլանսո, Պառոն Սոմիկո եւ Լօրս Տէրպէ Փարիզէն Լոնտոն ճամբայ ելան, ձեռնէրալ Փօշ աշպիտի երբայ աշխարհիս հետ:

Հունգարական կառավարութիւնը որոշեց արգելափակել Մախեմեմի 70 հազար զինուորները:

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՋԷ ԹԱԼԷԱԹԸ ԵՒ ՃԷՄԱԼԸ

Լոնտոն. 28. Բ. Դուրը կը պահանջէ Դերմանիայէն Թալէաթ եւ ձեռնալ յանձնու մը որովհետեւ անոնք են ռճարգործ փախստակներ:

Ամսթերսմ. 29. Պալարիայի Ոմիսը իր յարաբերութիւնը խզեց Պերլիմի արտաքին գործոց օժիտին հետ, հիմ ռեժիմի մերթնեւեռն շարունակուելուն պատճառաւ:

Քօլիէնհակէն 29. Պատեմի յառաջդիմական խմբակը կոչ ըրաւ ազատելու համար երկիրը անիշխանութենէ եւ Պերլիմի բռնակալութենէն. ընդունեցին Վիրթենպերկցիները. Աւստրիացիները եւ Բրուսացիները իր եղբայրներ եւ միացեալ թշնամի Բրուսիական զօրապաշտութեան եւ Պերլիմի անիշխանութեան:

Լոնտոն. 30. Պերլիմէն կը հրատարակեն փաստաթուղթ մը, ստորագրուած կայսրին կողմէ, որուն մէջ կայսրը բացայայտ կերպով կը յայտարարէ իր իրաւունքը Բրուսիոյ եւ Դերման կայսրութեան բազին եւ յոյս կը յայտնէ, որ նոր Ռեժիմը պիտի կրնայ պաշտպանել Դերման ժողովուրդը անիշխանութենէ, անօրութենէ եւ արտաքին գերակալութենէ:

Մուգաթթամ կը գրէ, Դերման Սոցիալիստ բերքերը կը պահանջեն որ Պերլիմէն Հօլլանդ, Ֆոն Եակօմ եւ Ջիմէրման դատուն դաւաճաններու շարքին մէջ:

Բէյի Թաուն 30. Հարաւային Աֆրիկէի մէջ պատերազմի ընթացքին Սպանիական Ինճիլիէնզայէն մեղմողներու թիւն է 50,000:

L. 3007 P. 17

ԳԻՐԱԿԻ

ՀԱՅԿ 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1918

ԿԵՐ ԵՒ ՋՈՐԴԷ
ԵՐԵՎԱՆԻ ԿԵՐԱՆԻՔԻHAY TZAIN
Journal Arménien

Gérant-Responsable

Ֆ. Գրիբենյան

Djoudjé, Rue Zebkai
N° 3

ՀԱՅ ԶԱՅՆ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

20 ՓԵՐՇ 20

های تساین

صاحب لائتياز والمدير المشول

مستراك كاتلبان

اتحاد المجريدة ومطبعها

في زقاق الأربال نمره 3

Հիւսիս-արեւմտ Զեպկայի փողոց
Բի. 3

Ա ՏԱՐԻ ԹԻԻ

19


ՏԱՐԱԳԻՐ

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

ՔԱՂԱՔԱԿԱՆ • ԳՐԱԿԱՆ • ԸՆԿԵՐԱՅԻՆ

ԱՐՏՈՆԱՏԵՐ ԵՒ ԱՐԽԵՐԱՆԵԱՆ

ՀԱՅԵ ՏԱՐԱԳԻՐ (Տպարան Մարտի)



Մեղային - Երգիճական

ՏՈՒՆԷԱՐ

- 1925 -

ՀԱՆԿՊ



ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ

Բ.ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1926

ԹԻԻ 15

« ԱՄՍԱԳԻՐ » ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ
Խմբագ. Հասցե « ՈՒՍՈՒՄ »
B.P. N° 213 Հալեպ (Սուրիա)

ՀԱՆԿՊ

« OUSBOUN » REVUE ARMÉNIENNE
Adresse Réd. « OUSBOUN »
B.P. N° 213 Alep, (Syrie)

Եղիազար Պէնլեանի մահէն ետք արտօնատէրն է եղած Հայկաշէն Ուզունեան:

Սփրատի աշխատակցած են Նշան Սաաթեան (Ռշտունի), Միքայէլ Նաթանեան, Միհրան Տէր Ստեփանեան, Սահակ Կթղ. Խապայեան, Արտաւազդ Արքս. Սիւրմէեան, Մկրտիչ Քէնյ. Մուրատեան, Տոքթ. Յարութիւն Տէր Ղազարեան, Տոքթ. Բ. Սեւեան, Միհրան Աղազարեան, Արսէն Կիտուր, Յովհաննէս Պօղոսեան, Արամ Գիտակից (Պիլէմճեան), եւլն.:

Սկսնակ գրողներէն՝ Զարեհ Մեղքոնեան, Անդրանիկ Նաճարեան, Արամ Արման (Սուրէն Պասմաճեան), Պետրոս Պարզեւ, Ստեփան Ալաճաճեան, Գառնիկ Աղազարեան եւ ուրիշներ իրենց մկրտութեան աւագանը դտան հոն:

Ընդհանրապէս սակաւաթիւ սուրիահայ մամուլը 1927-1946 թթ.-ուն կ'ունենայ աւելի նուազ թերթեր, եւ այս շրջանին Սփրատ կ'ըլլայ տիրական թերթը, որ կը ներկայանայ որպէս ցոլարանը դաղուծին մէկ որոշ հատուածին ապրումներուն:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ: Կրօնաբարոյական, գիտական, կրթական երկչարթաթերթ: Հալէպ, 1927 թ.ի Նոյ. 5 - 1934 թ.ի ամառ: Արտօնատէր՝ Վերապատուելի Կարապետ Յ. Յարութիւնեան, պատասխանատու տնօրէն՝ Տիգրան Ճ. Խրլորեան:

Ծրագիր. «Պիտի պարունակէ կրօնական, բարոյական եւ առողջապահական յօդուածներ. պիտի ունենայ նաեւ մասեր քաջալերելու ընտանեկան աղօթքը, Կիրակնօրեայ դպրոցը եւ երիտասարդաց ընկերակցութիւնները. պիտի պարունակէ նաեւ եկեղեցական եւ աւետարանչական գործունէութեան վերաբերեալ լուրեր»:

Թերթը իր անունը առած է Պոլսոյ Աւետաքերէն (1855-1914 թթ.), որ կը հրատարակուէր Ամերիկ. Պոլսոյ Ընկերութեան կողմէ:

Աւետարանական թերթի մը անհրաժեշտութեան մասին կը խօսուի Սուրիոյ Հայ Աւետարանական Միութեան 1926 թ.ի Ապրիլին Հալէպի մէջ գումարուած տարեկան ժողովին ընթացքին եւ հինգ հոգիներոց յանձնախումբ մը կ'ընտրուի այս հարցով զբաղելու համար: 1927 թ.ի դարնան Պէյրութի մէջ գումարուած Միութեան ժողովը կ'որոշէ գործի ձեռնարկել: Խմբագրութեան պաշտօնին կը հրաւիրուի Տիգրան Խրլորեան, որ նոյն տարին Աթէնքի Կրօնական Վարժարանի աստուածաբանական ճեմարանէն վկայուելով ամառուան սկիզբը Հալէպ կը հասնի, իր գործին սկսելու համար:

Ինչպէս անդրադարձանք, Նոյ.ի 5-ին լոյս կը տեսնէ Նոր Աւետաքերի առաջին թիւը, որպէս բովանդակութեան ծրագիր ունենալով հետեւեալը - 8 էջ հայերէն եւ 8 էջ հայատառ թրքերէն, տարբեր բովանդակութեամբ:

Թերթը ունեցած է ընտանեկան աղօթքի, Կիրակնօրեայ դպրոցի դասերու, եկեղեցական եւ ընդհանուր կրօնական լուրերու բաժիններ: Յօդուածները կրնային շօշափել ամէն նիւթ՝ բացի քաղաքականէն:

Արտոնատիրոջ՝ Վեր. Կ. Յարութիւնեանի մահով (1934 թ. ամառ), Թերթն ալ կը դադրի զոյութիւն ունենալէ:

ՆԱՅԻՐԻ: Պարբերադէրք դրականութեան եւ արուեստի, 1941 յոյ. - 1943 թթ. (19): 1945-1949 թթ. ուն, ամսաթերթ: 1950 թ. ին լոյս չէ տեսած: 1951 թ. ին լոյս տեսած է Պէյրութ, երբեմն միացեալ թիւերով: 1952 թ. էն սկսեալ շարաթաթերթ: Խմբագիր Անդրանիկ Ծառուկեան:

Սուրխահայ դրական մամուլին ամենէն երկարակեացն է, շուրջ 9 տարի, եւ իր արժէքով ամենէն որակաւորներէն:

Թերթը ընկալեալ սովորութիւնը գիտակցօրէն անտեսելով՝ չի ներկայացներ որեւէ ծրագիր: Այս հարցին խմբագիրը կ'անդրադառնայ Ա. շրջանի վերջին թիւին վերջին էջերուն մէջ. «Ընդունուած սովորութեան հակառակ, որեւէ ծրագիր չպարզեցինք Նայիրիի առաջին պրակով եւ հետագային զգուշացանք խոստումներու հանդէս մը սարքելէ, վստահ չիտնալով, թէ խոստումները արժէք չունին դրական ձեռնարկի մը համար, երբ չկայ գործը»:

Այդ գործին վերլուծումը ընելով կը յանդի հետեւեալ եզրակացութեանց.

«Նայիրին փնտռուած ու ամենուրեք գնահատուած հրատարակութիւն մըն է այլեւս: Կրցաւ իրեն կապել նոր սերունդի արժէքաւոր գրողներուն դրեթէ ամբողջութիւնը: Յաջողեցաւ ի մի խմբել տարբեր դադափարի, տարբեր հոսանքի պատկանող եւ յաճախ իրերամերժ տարրեր ի'ր իսկ անաչառութեամբը ցոյց տալով բոլորին, թէ դրականութիւնը բարձր է ընթացիկ ամէն նկատումէ» (էջ 291):

Նոր սերունդը կոչուով այստեղ պէտք է հասկնալ 1930-ական թուականներուն Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հասակ առած գրողները՝ Մ. Իշխան, Սեզա, Արմէն Անոյշ, Եղուարդ Պօյաճեան, Եղուարդ Տարօնեան, Բիւզանդ Եղիայեան, եւ ուրիշներ, որոնցմէ մաս մը իրենց դրական սկզբնաւորութիւնն ու կազմութիւնը կատարած էին Պոսթընի «Հայրենիք ամսագրին» մէջ եւ դրական տեղական ամսա-

19) Դ. եւ Ե. պրակները ամսաթիւ չունին: Միայն կը կրեն 1942 թուականը: Ե. Բիւիմ տպագրութեամբ համար կայ ակնարկութիւն մը. «Այս Բիւիմ տպագրութիւնը վերջացաւ 20 Մարտ 1943-ին», 1944 թ. ին մէկ Բիւ:

թերթի մը հրատարակութեան առիթով՝ կը մէկտեղուէին Նայիրիի շուրջ: Սկսնակ գրողներ դրեթէ բացակայ են Նայիրիէն: Եթէ պարագայական աշխատակցութիւն մը բերած են, չեն կրցած մնայուն տեղ մը ապահովել եւ շուտով անյայտացած են:

Տարբեր շրջանակի գրողներ մէկտեղուած են Նայիրիի շուրջ: Դաշնակցականներու կողքին, ռամկավար կամ ռամկավարամիտ գրողներէն Նայիրիի աշխատակցած են Արիւ Շաքլեան, Վահէ Վահան, Օննիկ Սարգիսեան, Բիւզանդ Եղիայեան, Սմբատ Փանոսեան, Տոբթ. Խ. Պողոսեան, Սարգիս Եսփուճեան, Միհրան Տէր Ստեփանեան, եւ ուրիշներ:

Նայիրիով սկսուած այս համախմբումը պիտի կրկնուի նաեւ 1940-ական թուականներուն Հայէպի մէջ լոյս տեսնող Դէպի Երկիրին, Սեւանին եւ Պէյրութի մէջ լոյս տեսնող Ծիածանին ու Ալիօսին մէջ, սակայն երկար կեանք պիտի չունենայ: 1946 թ.ին սկսած ներգաղթը պիտի փոխէ դէպքերու ընթացքը:

Այս երեւոյթին աւելի լայնօրէն անդրադարձած ենք Լիբանանահայ մամուլի յիսուս տարիս վերնագրով մեր ուսումնասիրութեան մէջ եւ հոս կրկնութենէ կը խուսափինք:

Որոշնք կ'աշխատակցէին Նայիրիին: Բացի վերոյիշեալներէն իրենց աշխատակցութիւնը բերած են նաեւ՝ Սահակ Պալըզեան, Եղիվարդ, Պարոյր Մասիկեան, Ժադ Յակոբեան, Հայկ Ժամկոչեան, Յակոբ Օշական, Ա. Լէյլանի (Մովսէս Տէր Գալուստեան), Եղուարդ Տասնապետեան, Արսէն Երկաթ, Զարեհ Մեղրոնեան, Մինաս Թէօթօլեան, Կոստան Զարեան, Ս. Սահակեան, Գէորգ Զէքիճեան, Արամ Աֆարեան, Ստեփան Շահպաղ, Նիկողոս Սարաֆեան, եւ ուրիշներ:

Նայիրիի հրատարակութիւնը անկիւնադարձ մը կը կազմէ անոր խմբագրին՝ Ա. Ծառուկեանի գրական դիմագիծին մէջ: Հոն բացակայ է Հայրենիք ամսագրի Վազգէն Տէրունեան ծածկանունին տակ թաքնուած եւ Առաքատումեր քերթողագիրքին բանաստեղծը: Գրական ամսաթերթ Նայիրին կը յայտնաբերէ գրական քննադատ Ծառուկեանը: Այդ երակը ամենէն աւելի զգալի է իր հաշուեյարդար խորագրով քննադատական յօդուածներուն մէջ, ուր նկատի առնուած են 20-25 տարուան գրական անցեալ ունեցող կարգ մը գրողներ: Այս գրողներուն մերջին հրատարակութիւնները գրախօսուած են եւ հեղինակները ենթարկուած են «հաշուեյարդար»ի: Երգիծանքի երանդ մըն ալ ներկայ է այս յօդուածներուն մէջ:

Նայիրին լայն տեղ տուած է սփիւռքը յուզող գրական եւ երբեմն գրականութեան պիտակին տակ թաքնուած քաղաքական հարցերուն: 1946 թ.ին, երբ սփիւռքի զանազան կեդրոններուն մէջ

պատրաստութիւններ կը տեսնուէին Յ. Օշականի գրական գործունէութեան քառասնամեայ յորելեանը տօնելու, խաչակրութիւն մը կը սարքուէր Օշականի դէմ: Նայիրին Օշականի ամենէն հաւատարիմ պաշտպաններէն մէկը կ'ըլլար:

«Սովետական Գրողներու Բ. Համագումարը» (Երեւան, 1946 թ.) եւ Գաղութահայ Գրողներու Համագումարը (Եթորա, Լիբանան, 1947 թ.) առատ նիւթ կը հայթայթեն թերթին:

Նայիրին հաստատած է մատենաշար մը եւ լոյս ընծայած էր կարգ մը գրողներուն գործերը, ինչպէս Մ. Իշխանի Հայաստանը, Ե. Պոյաճեանի Հողը, եւլն.:

ԱՐԵՒԵԼԻՔ: Օրաթերթ (1946 թ.-ի Յունիսի 23 - 1963 թ.-ի Մարտի 7): Արտօնատէր եւ պատասխանատու տնօրէն՝ Հրաչ Փափագեան (1946-1960 թթ.), ապա՝ Տոքթ. Աւետիս Ինճէճիկեան՝ արտօնատէր (1960-1963 թթ.), իսկ Ներսէս Պարսումեան՝ պատ. տնօրէն (1960-1963 թթ.):

Խմբագիրներ եւ օղնական խմբագիրներ՝ Անդրանիկ Ծառուկեան, Օննիկ Մելիքսէթեան, Օննիկ Թօփուզեան, Մինաս Թէօլէօլեան, Կէորգ Տօնապետեան, Միհրան Հերարդեան, Լուտեր Մասպանաճեան, Նշան Իսրայէլեան եւ Երուանդ Մոնոֆարեան: Այս խմբակին մէջէն ամենէն երկարատեւ խմբագրութիւնը վարած է Մինաս Թէօլէօլեանը (1946-1956 թթ.):

«Հաւատարիմ՝ անցեալին» խորագրով էր առաջին խմբագրականին մէջ թերթը կը ճշդէ էր ուղին.

« 1) Հաւատարիմ հետեւողութիւն մը հիւրընկալ երկրին քաղաքականութեան եւ անկեղծ յարում մը՝ այդ երկրին ժողովուրդներուն ձգտումներուն:

« 2) Արթուն յուշարարի դեր մը՝ տեւաբար Հայրենիքը դադրական զանդուածներուն սրտին մէջ պահող եւ կարօտաբաղձ էր դաւաններուն կանչը Հայրենիքին լսելի դարձնող:

« 3) Մշտական ներկայութիւն մը, տեւաբար զաղութին հանրային կեանքը հակակշռող եւ մեր կազմակերպութիւններուն ծաւալուն ցանցին գործունէութիւնը ներդաշնակող»:

Թերթին ուղիին երկրորդ կէտը՝ այդ օրերու ընդհանուր հոգեբանութեան եւ մտայնութեան իրական պատկերը կը ցոլացնէր: Համաշխարհային Բ. Պատերազմը վերջ գտած էր դաշնակիցներու յաղթանակով, որոնց կարգին՝ Սովետ Միութիւնը: Հ. Յ. Գաշնակցութիւնը պաշտօնապէս կը մասնակցէր 1945 թ.-ի Նոյ. 29-ի տօնակատարութեան, Սուրբոյ էր դեկավարներէն Միհրան Հե-

րարգեանը որպէս բանախօս տրամադրելով: Թերթին առաջին խմբագիրը՝ Անդրանիկ Մառուկեան, մէկ տարի առաջ լոյս ընծայած էր «Թուղթ առ Երեւան» քերթողագիրքը, որուն վերջաբանին՝ «Հէյ Զան Երեւան»ին մէջ փառաբանանքը ընելով Երեւանին (իմա՛ Հայաստան), կը մաղթէր որ իր դերիկը լայն բանայ եւ «հարգատեներին հայրենիք կանչէ»:

Սակայն համերաշխութեան միջնորդը հազիւ սկսած՝ յօդս կը ցնդէր:

Եթէ լայն տեղ կու տանք Արեւելի օրաթերթին, որովհետեւ առանձնակի երեւոյթ մը կը ներկայացնէ ան: Նախ՝ յարաբերաբար իր երկարատեւ հրատարակութեամբ (18 տարի): Արդարեւ սուրիահայ դաղութը չէ կոցած պահել երկարատեւ հրատարակութիւններ: Ատոր պատճառներուն անդրադարձանք: Երկրորդ՝ սուրիահայ քաղաքական մամուլին մէջ իր բերած շրջադարձով: Հ. Յ. Դաշնակցութիւնը որ 1918 թ.-էն ի վեր դոյութիւն ունեցած է Սուրիոյ մէջ, իր պաշտօնական հրատարակութիւնը չէր ունեցած մինչեւ Արեւելի հրատարակումը: Իր շարքայիներուն եւ համակիրներուն նախաձեռնութեամբ լոյս տեսած են թերթեր, սակայն շատ կարճատեւ կեանք ունեցած են անոնք:

Արեւելի ծնունդէն կարճ ժամանակ ետք կը դադրէր Եփրատը: Յովհաննէս Եղերճեանի Սուրիա օրաթերթին (1946-1960 թթ.) հետ, Արեւելքը դարձաւ Սուրիոյ հայութեան բանբերը: Արեւելի դադրեցաւ 1963 թ.-ի Մարտին:

Արեւելի դադարումէն ետք Սուրիոյ հայ դաղութը չունեցաւ իր օրաթերթը՝ եւ այսօր ան կը սնանի Լիբանանի հայ օրաթերթերով, ի մասնաւորի Զարթօնքով եւ Արաքատով, որոնց միայն շնորհուած է Սուրիա մուտքի արտօնութիւնը:

Սուրիոյ պարագան եզակի երեւոյթ է ամբողջ սփիւռքի մէջ: Ո՛ւր որ հայահոծ դաղութ ունինք, մեր առօրեայ մամուլը կը դործէ, երբեմն մէկի տեղ երկու-երեք առանձին հրատարակութեամբ:

Արեւելի օրաթերթը ունեցաւ իր սեփական տպարանը ուրկէ լոյս ընծայուեցան Արեւելի տարեգիրքը (1 տարի, 1948 թ.-ին, խմբագրութեամբ Մինաս Թէօլէօլեանի) եւ Արեւելի Մարգալիտաքիւր, որուն առանձինն պիտի անդրադառնանք:

ԱՐԵՒԵԼԻՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ: Մարդական շաբաթաթերթ Արեւելի օրաթերթի: Հալէպ, 1957 թ.-ի Յուլիսի 30 - 1963 թ.-ի Մարտի 7: Խմբագիրներ՝ Զաւէն Սապունճեան եւ Լութեր Մասպանճեան:

Մարմնամարզը նոր սերունդին կեանքին մէջ անհրաժեշտութիւն մը դարձած ըլլալով՝ թերթը կը նպատակադրէ՝ 1) Հայ երի-

տասարդը դէպի մարմնամարդ մղել, 2) Յաղթանակի մը կամ պարտութեան մը արդիւնքներուն հետ միասին նաեւ անոնց գլխաւոր պատճառները մատնանշել:

Սուրիահայ մամուլի մարզական միակ ներկայացուցիչը, որ կրցաւ շուրջ 7 տարի իր դոյութիւնը պահել, իր խմբագիրներէն՝ Զաւէն Սապունճեանի մարզական խորունկ հետաքրքրութիւններուն շնորհիւ:

Դադրեցաւ 1963 թ.ի Մարտ 7-ին Արեւելք օրաթերթին հետ:

ՍՈՒՐԻԱ: Անկախ օրաթերթ: Հալէպ, 1946 թ.ի Յունիսի 17 - 1960 թ.: Արտօնատէր՝ Յովհաննէս Շաղրճեան, խմբագրապետ՝ Մատթէոս Երէցեան (առաջին չորս ամիսը): Այնուհետեւ խմբագիր կամ օդն. խմբ. եղած են Յարութիւն Տէր Ղազարեան, Մարտիրոս Դուշաղճեան, Կարօ Սարաֆեան, Տիգրան Կիւլիւզեան եւ Շղիա Նաճարեան:

«Մեր ուղին» խմբագրականին մէջ կը ներկայացուի թերթին ծրագիրը. «Մենք լայն տեղ պիտի տանք մեր սիւնակներուն մէջ Սուրիոյ կեանքին բոլոր երեւոյթներուն եւ հաւասար չափով պիտի հետաքրքրուինք Արաբական աշխարհով:

«Սուրիան ԱԶՍՏ եւ ԱՆԿԱՍ, դերժ ամէն կապանքէ, ու սքօղ-ուած չարամիտ դիտումներէ, այս է մեր հաւատամքը:

«Եւ երբ կը սիրենք Սուրիան, ու կը պարծինք անոր քաղաքացիի մեր հանդամանքովը, պարզապէս անոր համար որ իսկական հայրենասէր հայեր ենք:

«Մենք չենք կրնար մոռնալ մեր բաղձալարչար Հայրենիքը, անոր Հրաշափառ Յարութիւնը, ու անոր անօրինակ վերելքը վերջին քառորդ դարու ընթացքին»:

Թէեւ ինքզինք պիտակած է անկախ, սակայն խորքին մէջ Հընչակեան ուղղութեամբ թերթ: Հիւանի Զայիմի իշխանութեան շրջանին պետական արդելքով ժամանակաւորապէս դադրած է:

ՍԵՒԱՆ: Պարբերադիրք գրականութեան եւ արուեստի: Հրատ. Հալեպահայ Ուսուցչական Միութեան: Սեւան Հրատարակչական Մարմին: Լոյս տեսած է 2 թիւ (1946 թ.): Պաշտօնապէս խմբագրի անուն չի տրուիր, սակայն որոշ է որ Սիմոն Սիմոնեանն է խմբագիրը:

Սիմոնեան քաջալերուած Միութեան սեփական տպարանով և դրական աւագ դործիչներու աշխատակցութեան խոստովով, ճամբայ կ'ելլէ, սակայն, աւագ, թերթը կ'ունենայ ասուպային կեանք մը - երկու թիւի հրատարակութեամբ վերջ կը դառնէ:

Ի՞նչ է ծրագիրը: «Մուտք» խորագրեալ բացատրողականին մէջ խմբագիրը կը ճշգէ. «Մեր առաջադրութեամբն իսկ՝ այս պարբերականին բովանդակութիւնը չի սահմանափակուիր գրականութեան յատուկ յօրինումներով, այլ կ'ընդգրկէ գրաւոր մշակոյթի զանազան կալուածները՝ միշտ ներշնչուած մնալով ցեղայինէն» (էջ 2):

Թերթին նպատակէն եւ իրագործումէն մեկնելով՝ պէտք է սրբագրել «պարբերագիրք գրականութեան եւ արուեստի» պիտակը, եւ փոխարինել պարբերագիրք հայ մշակոյթի խորագիրով: Արդարեւ հոն կայ գեղարուեստական գրականութիւն, գրական քննադատութիւն, բանասիրութիւն, մատենագրական ակնարկ, տեղագրութիւն, արուեստներու ակնարկ, ազգագրութիւն, գրախօսական, լեզուաբանութիւն, եւլն.:

Ունի աշխատակիցներու պատկառելի փաղանդ մը Սուրբայէն, Լիբանանէն, Եգիպտոսէն, Պաղեստինէն եւ Պոլիսէն: Անուններու պարզ թուումը պերճախօս փաստն է թերթին որակին՝ Գարեգին Կթղ. Յովսէփեանց, Վ. Թէքէեան, Եղիվարդ, Ա. Մառուկեան, Արամ Արման, Ս. Սահակեան, Զարեհ Մեղեռնեան, Արաքսի Պապիկեան, Միքայէլ Ս. Կիւրճեան, Սահակ Պալլադեան, Սմբատ Փանոսեան, Արիս Շաքիեան, Յ. Օշական, Բիւզանդ Եղիայեան, Ն. Աղբալեան, Շահան Ռ. Պէրպէրեան, Գոհարիկ Ղազարոսեան, Հայր Ներսէս Ակինեան, Տոքթ. Յարութիւն Տէր Ղազարեան, Տէր Օշական Քհնյ. Սայրեան, Տէր Մկրտիչ Քհնյ. Մուրատեան, Սիմոն Սիմոնեան:

Սկզբնական ծրագիրը եղած է տարեգիրքի մը հրատարակումը, սակայն սեփական տպարանի մը հաստատումը մղած է Միութիւնը պարբերաթերթի մը հրատարակութեան: Ափսոս որ թերթը կարճատեւ կեանք ունեցած է:

Դէ՞Պի ԵՐԿԻՐ: Պարբերագիրք գրականութեան եւ արուեստի: Հրատարակութիւն Հայրենաբաղձ Հայերու Ընդհանուր Միութեան: Դ.-Ե. միացեալ թիւէն սկսեալ հրատարակութիւն Սովետական Հայաստանի հետ Մշակութային Կապի Հաւելազայ Ընկերակցութեան: Հալէպ, 1945 թ.ի Մարտ - 1947 թ.ի Մարտ: Ա.-Ե. թիւերու խմբագրական մարմին՝ Անդրանիկ Նաճարեան եւ Պետրոս Պարգեւ, Զ. Թիւին համար՝ Ա. Նաճարեան, Մարտիրոս Գուշազեան եւ Յակոբ Ալէքսանեան:

1949 թ.ին լոյս ընծայուած է թիւ մը: Իսկ 1956 թ.ին լոյս տեսած Երկիր պարբերաթերթը կարելի է բնական շարունակութիւնը նկատել Դէպի Երկիրին:

«Մեր Զայնը» խորագրով խմբագրականին մէջ կը ներկայացուի ծրագիրը. «Կ'աշխատինք անհոգի սէրը հանդէպ Հայաստանի և մեզ հիւրընկալով Արաբ ժողովուրդի գրականութեան: ... Ուրեմն Դէպի Երկիրը մշակոյթի կամուրջ մըն է, ուրիշ պիտի տողանցեն Հայաստանի եւ Գաղթահայութեան եւ Արաբ ժողովուրդի մտաւոր ճիւղերը»:

Աշխատակիցներ՝ Բիւզանդ Եղիայեան, Զարեհ Մեղեոնեան, Սահակ Պալըզեան, Սիմոն Սիմոնեան, Պետրոս Պարզեւ, Նուպար Փարթամեան, Եղուարդ Պոյաճեան, Վահէ Վահեան, Յակոբ Ներսիսեան, Ա. Նաճարեան, Տիկլին Սեղա, եւ ուրիշներ:

ԿԱՆԹԵՂ: Հանդէս գրականութեան եւ արուեստի: Հալէպ, 1953-1954 թ.ի Յունիս: Խմբ.: Ա. Երազենց (Աւետիս Պարմաքսըզեան):

Հակառակ մտաւորական ոչ-պատրաստութեան եւ ասպարէզով դերձակ ըլլալուն՝ գրականութեան հոլորով տոչորուած այս 20-ամեայ խմբագիրը կրցած էր իր թերթին շուրջ համախմբել անուանի գրողներ, ինչպէս՝ Նշան Պէշեքճեան, Նիկողոս Սարաֆեան, Մինաս Թէօօլեան, Մ. Իշխան, Եղուարդ Պոյաճեան, Յ. Գեղարդ, եւլն.:

Ցաւալի է որ հազիւ երեք թիւ լոյս տեսած՝ կը դադրէր այս հանդէսը: Գրականութեան հանդէպ երիտասարդական վաղանցուկ կրակի մը բորբոքումի՞ն արդիւնքն էր այս հրատարակութիւնը. կրակի մը, որուն շիջումէն ետք կը դադրէր հանդէսը, թէ ոչ՝ նիւթական պայմաններ կը ստիպէին որ դադրի ան: Ինչ ալ ըլլայ անոր պատճառը, սա իրողութիւն է որ Ա. Երազենց գրեթէ այլեւս դադրեցաւ գրելէ եւ պարապական աշխատակցութիւն մը ունեցաւ Հայ թերթերու:

ԲՈՒՐԱՍՏԱՆ: Երկամսեայ: Մանկա-պատանեկան հրատարակութիւն Հալեպահայ Ուսուցչական Միութեան: Հալէպ, 1950-1956 թթ.:

Ունեցած է խմբագիրներու շարան մը, որուն մէջ հիմնական եւ երկարատեւ աշխատանք կատարած են Գրիգոր Պողարեան, Հայկ Պարիկեան եւ Ռուբէն Տիրաբեան:

Թերթին նպատակը եղած է օգտակար եւ հաճելի նիւթեր Հայ-թայթիլ դպրոցական աշակերտ-աշակերտուհիներու, զօրացնել անոնց մէջ ընթերցանութեան սէրն ու ճաշակը, նաեւ կազմել անոնց հոգիէն ներս՝ գեղեցիկ զգացումներու աշխարհը:

Կարելի է զայն նկատել սուրիահայ մամուլի միակ մանկա-պատանեկան թերթը, որ յարաբերաբար երկարատեւ գոյութիւն մը ունեցած է, շուրջ 6 տարի:

ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՍՈՒՐԻԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

ԱԶԳԱՅԻՆ ԽԱՄԱՃԻԿՆԵՐ: Վիժառիկ: Դամասկոս, 1919 թ.:
Խմբ.: Արմենակ Տէր Յակոբեան:

ԱԺԱՆՍ ՌԻԻԹԷՐ (Թարգմանաբար): Հալէպ, սկսած է 1918 թ.ի նոյ.ին: Պատասխանատու՝ Ս. Մհնունի:

ԱՆ ՖՈՒՐԱԹ (Եփրատը): Հալէպ, 1869-1870? թթ.: Հալէպի կուսակալութեան պաշտօնաթերթ, որ լոյս տեսած է երեք լեզուով - արաբերէն, թրքերէն եւ հայերէն:

ԱՂԲԻՒՐ: Խմբաւորիկ ամսաթերթ, ապա պարբերաթերթ: Հալէպ, 1913-1914 թթ.:

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԱԼԸ: Թերթ Հայ երիտասարդ Առաքելոց: Ամսաթերթ: Հալէպ, 1953 թ.ի նոյ. - 1959 թ.ի Մայիս: Սկիզբը ձեռագիր, 1955 թ.ի Դեկտ.էն սկսեալ տպագիր: Անուանափոխուելով կոչուած է Առաքել:

ԱՐԵՒԵԼԻՔ: Օրաթերթ: Հալէպ, 1946 թ.ի Յունիսի 23 - 1963 թ.ի Մարտի 7:

ԱՐԵՒԵԼԻՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ: Մարզական շաբաթաթերթ Արեւելք օրաթերթի: Հալէպ, 1957 թ.ի Յուլիսի 30 - 1963 թ.ի Մարտի 7:

ԱԽԱՐԱՅՐ: Աշակերտական թերթ Սուրբ Վարդան դպրոցի (նոր Գիւղ): Հալէպ, 1950-1951 թթ.: Ձեռագիր: 2 թիւ:

ԲԱՄԲԻՒ: Հանդէս Ազգ. Քարէն Եփեմ Ճեմարանի ուսանողութեան: Հալէպ, 1953 թ.ի Յունիս - 1955 թ.ի Յունուար: Լոյս տեսած է 7 թիւ: Մեքենագիր, ապա՝ տպագրուած:

ԲԱՐՁՈՒՆՔ: Պարբերական հրատարակութիւն Հ. Բ. Ը. Մ.ի Լազար Նաճարեան Կեդր. Վրժ.ի: Հալէպ, 1958-1961, 1971 թթ.:

Անունով պարբերական, սակայն իրականութեան մէջ՝ տարեգիրք:

ԲՈՒՐԱՍՏԱՆ: Մանկա-պատանեկան հրատարակութիւն Հալէպահայ Ուսուցչական Միութեան: Երկամսեայ: Հալէպ, 1950-1956 թթ.: Լոյս տեսած է 36 պրակ:

ԳԱՂԹԱԿԱՆ: Ձեռագիր: Հալէպ, 1918 թ.:

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ: Ամսաթերթ: Գիտական, տնտեսական, բնկերաբանական, դրական, բժշկական, կրթական եւ դիւղատնտեսական: Հալէպ, 1923 թ.ի Յունիս-Նոյեմբեր: 6 թիւ: Խմբ.՝ Վարդ-Մեխակ (Վարդեմիա Գարանֆիլեան):

ԳՐԱՍԷՐ: Ամսաթերթ Ամերիկեան Աղջկանց եւ Մանչերու Հայ Ուսանողութեան: Հալէպ, 1942 թ.ի Յունուար - 1952 թ.: Սկիզբը՝ մեքենագիր, ապա՝ տպագիր:

ԴէՊի ԵՐԿԻՐ: Պարբերաթերթ զրականութեան եւ արուեստի: Հրատ. Հայրենաբաղձ Հայերու Ընդհ. Միութեան: Յետոյ դարձած՝ հրատ. Սովետական Հայաստանի հետ Մշակութային Կապի Հաշվաւոր Ընկերակցութեան: Հալէպ, 1945 թ.ի Մարտ - 1947 թ.ի Մարտ: 6 թիւ: Մէկ թիւ ալ 1949 թ.ին:

ԵՐԻՏԱՍՍՐԴ ԴՈՐՄԱՅՈՐ: Տե՛ս Քրիստոնեայ Գործաւոր:

ԵՐԿԻՐ: Դիւրջ զրականութեան եւ արուեստի: Հալէպ, 1956 թ.ի Դեկտ. - 1959 թ.: 8 թիւ:

Խմբ.՝ Մարտիրոս Գուշակճեան, ապա՝ Հայկ Գուշումճեան:

ԵՓՐԱՏ: Քաղաքական լրագիր: Օրկան Հալէպի Ս. Դ. Հնչակեան Մասնաճիւղին: Հալէպ, 1919 թ.: Խմբ. Տոքթ. Գրիգոր Մուշեան: Լոյս տեսած է չորս թիւ:

ԵՓՐԱՏ: Եռօրեայ, երկօրեայ, շաբաթաթերթ, ապա՝ օրաթերթ: 1927 թ.ի Յուլիսի 6 - 1949 թ.:

ԶԱՐԳԱՅԻՐ: Պաշտօնաթերթ Այնթապի Կրթասիրաց Երիտասարդաց Միութեան: Հալէպ, 1930-1931 թթ.: 6 թիւ: Զեռագիր:

ԶԱՐԹՕՆՔ: Գրական, դիտական, տնտեսական եւ քաղաքական շաբաթաթերթ: Ալէքսանտրէթ (Իսկէնտէրուն), 1942 թ.ի Ապրիլի 12-էն սկսեալ: Լոյս տեսած է 24 թիւ: Արտօնատէր՝ Մարթին Պապիկեան: Պատ. տնօրէն՝ Մարտիրոս Տէր Ստեփանեան:

Թերթը լոյս տեսած է նաեւ Փրանսերէնով Le Réveil du Sandjak յերտառութեամբ:

ԼՈՅՍ: Աշակերտական ամսագիր Կրթասիրաց երկսեռ վրժ.ի: Հալէպ, 1927 թ.ի Ապրիլ - 1932 թ.ի Մարտ: 16 թիւ: Զեռագիր:

ԽԱՉԳՈՒՌ: Պարբերաթերթ: Հայ Աւետարանական Բեթէլ Բարձր. Վրժ.ի Աշակերտութեան Օրկան: Հալէպ, 1946 թ.ի Նոյ. - 1948 թ.ի Յունիս: 6 թիւ:

ԾԱՂԿԵՓՈՒՆՁ: Զեռագիր ամսաթերթ Զաւարեան Վրժ.ի Շըրջանաւարտից Միութեան: Հալէպ, 1944 թ.ի Նոյ. - 1949 թ.ի Դեկտ.:

1948 Յունուարին դարձած է խմորատիպ:

ԾԻԼԵՐ: Ուսանողական պարբերաթերթ Քարէն Եփիէ Ազգ. Ճեմարանի: Զեռնարի ԺԲ. կարգի: Հալէպ, 1961 թ.ի Հոկտ.էն սկսեալ: Լոյս տեսած է 3 թիւ: Մեքենագիր, ապա՝ տպագրուած:

ԿԱՆԹԵՂ: Գրական, դիտական եւ զեղարուեստական ամսաթերթ: Հալէպ, 1932 թ.ի Մարտ: Լոյս տեսած է մէկ թիւ:

Արտօնատէր՝ Տոքթ. Բարսեղ Սեւեան, պատ. տնօրէն՝ Յակոբ Իզնատլոսեան:

ԿԱՆԹԵՂ: Հանդէս զրականութեան եւ արուեստի: Հալէպ, 1953 թ. - 1954 թ.ի Յունիս: Լոյս տեսած է 3 թիւ:

Խմբ.՝ Ա. Երազենց (Աւետիս Պարմաքսըզեան):

ԿԵԱՆՔ: Պաշտօնաթերթ Կրթասիրաց Երկսեռ Վրժ.ի Շրջա-
նաւարտից Միութեան: Հալէպ, 1929 թ.ի Օգ. - 1936 թ.ի Մարտ:
Խմբարտիպ:

ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑ: Եռամսեայ: Հրատ. Հայ Ծերանոցի Խնամա-
կալութեան: Հալէպ, 1952 թ.ի Մարտէն սկսեալ: Հրատարակութիւ-
նը կը շարունակուի:

ՀԱՅ ԶԱՅՆ: Աղլալին, քաղաքական, դրական հայաթերթ (օ-
րաթերթ): Հալէպ, 1918 թ.ի Նոյ.ի 13-ին հիմնուած: 1919 թ.ին
փոխադրուած Ատանա (Կիլիկիա): Տէր եւ տնօրէն՝ Սեդրակ Կէպէն-
լեան:

ՀԱՅ ՊԱՏԱՆԻ: Հրատ. Մարաշի Մեսրոպեան Կեդր. Վրժ.ի:
Հալէպ, 1952 թ.ի Յունիս - 1956 թ.ի Մայիս: Լոյս տեսած է 5 թիւ:

ՀԱՅ ՍԻՈՒԼ: Ամսաթերթ Ամերիկեան Վարժարանի հայ ա-
շակերտութեան: Հալէպ, 1925-1926 թթ.: Մեր աղբիւրները կը յի-
շատակեն զայն, սակայն անձնապէս ոչ մէկ թիւ տեսած ենք:

ՀԱՅ ՔՆԱՐ: Հրատ. Գեղարուեստասիրաց Միութեան: Հալէպ,
1919 թ.:

ՀԱՅԿԱԶՆ: Պարբերաթերթ Հայկազեան Երկսեռ Վրժ.ի: Հա-
լէպ, 1946 թ.ի Ապրիլ-Յունիս: 4 թիւ:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ՊԱՏԱՆԻ: Հրատ. Կիլիկեան Վարժարաններու:
Հալէպ, 1946-1958 թթ.: Լոյս տեսած է 8 թիւ:

ՀԵՌԱԳՐԱՆՈՒՐԵՐ: Հայկ. աթանոս, Հաւաստի դործակալութե-
նէն, տպ. Սէպաթ (Աճէմեան): Այս տեղեկութիւնը կը հաղորդէ Եդ-
ուարդ Ոսկերիչեան (Կրթասիրաց, Ա. տարի, 1926, Յունիս, թ. 8,
էջ 122): Մեղի անծանօթ է այս թերթը:

ՀԻԻՍԻՍԱՅԳ: Լրագիր քաղաքական, դրական, տնտեսական
(հայերէն բաժին L'Eclair du Nord-ի): Հալէպ, 1936 թ.ի Յունի-
սի 30 - Օգոստոսի 10: Լոյս տեսած է 13 թիւ:

Տէր եւ տնօրէն՝ Նիքոլա Ճանճի, խմբ.՝ Մատթէոս Երէցեան:

ՀՈՍ-ՀՈՍ: Երգիծաթերթ: Խմբ.՝ Մկրտիչ Կապլաշ: Պէյրութ
(Լիբանան) լոյս տեսած թերթ, որուն մէկ թիւը (թ. 7, 1928 թ.
Օգոստ.ի 26) տպուած է Հալէպ, խմբագրին Հալէպ այցելութեան
պատճառով:

ԶԱՅՆ: Զեռագիր ամսաթերթ: Հալէպ, 1927-1928 թթ.: Պա-
տասխանատուններ՝ Կարապետ Գըլըբեան եւ Գրիգոր Ճըլճըլեան:

ՄԱՐԱՆԱԹԱ (Տէրը կու դայ): Հոգեւոր ամսաթերթ: Հալէպ,
1925 թ.ի Յունիսի 1 - 1963 թ.: 1964 թ.էն սկսեալ լոյս կը տեսնէ
Պէյրութ: Արտօնատէր՝ Աբրահամ Գ. Սէֆէրեան, պատ. տնօրէն՝
Մինաս Յ. Պօղօզլեան (որոշ շրջան մը):

ՄԵՂՈՒ: Ազգ., դրական եւ երգիծական: *Խմորատիպ ամսաթերթ:* Հալէպ, 1923 թ.ի Հոկտ. - 1925 թ.ի Մարտ:

ՄԵՐ ՈՒՂԻՆ: *Խմորատիպ ամսաթերթ* Հայ Ուսանողական Միութեան: Հալէպ, 1923 ?:

ՄՇԱԿՈՅԹ: *Պարբերաթերթ* Բեթէլ Եկեղեցւոյ Բրիտ. Զանից Ընկերակցութեան: Հալէպ, 1952 Ապրիլ:

ՄՇԱԿՈՅԹ: *Պարբերադիրք* դրականութեան, արուեստի եւ գիտութեան: Հալէպ, 1967 թ.էն սկսեալ:

ԽՄԲ. Անդրանիկ Արարատ (Նաճարեան):

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԼՊՈՄ: Հրատ. Հ. Յ. Դ. «Բրիտապիոր» Պատանեկան Միութեան: Թիւ 7-էն սկսեալ Միութեան անունը դադարած: Հալէպ, 1949-1962 թթ.: 1962 թ.էն սկսեալ լոյս կը տեսնէ *Պէյրութ:* **ԽՄԲ.** Նկարիչ Աւօ (Աւետիս Թումայեան):

ՅՈՒՇԱՐՁԱՆ ՄՈՒՍՍԵ ԼԵՐԱՆ: Հալէպ, 1955 թ.: **ԽՄԲ.** Մարտիրոս Գուշագեան: Լոյս տեսած է 1 թիւ:

ՆԱՅԻՐԻ: *Պարբերադիրք* դրականութեան եւ արուեստի, ապա՝ ամսաթերթ: Հալէպ, 1941 թ.ի Նոյ. - 1944 թ., 1945-1949 թթ.: 1951 թ.ին լոյս տեսած է *Պէյրութ* (Լիբանան), իսկ 1952 թ.էն սկսեալ դարձած է շաբաթաթերթ: **ԽՄԲ.** Անդրանիկ Ծառուկեան:

ՆՈՐ ԱԻՏԱՍԵՐ: Կրօնա-բարոյական, գիտական, կրթական երկշաբաթաթերթ: Հալէպ, 1927 թ.ի Նոյ.ի 5 - 1934 թ.ի ամառ:

ԱՐՄ. Վերապատուելի Կարապետ Յ. Յարութիւնեան, պատ. տնօրէն՝ Տիգրան Զ. Խրլորեան:

ՆՈՐ ԳԻՐՔ: *Պարբերաթերթ:* Հրատ. Գրասէր Երիտասարդներու Միութեան: Դամասկոս, 1958 թ.: **ԽՄԲ.** Հիլէն Տէր Ստեփանեան:

ՆՈՐ ՄԱՐԱՇ: *Պարբերադիրք* Մարաշի Հայրենակցական Վերաշինաց Միութեան: Հալէպ, 1946 թ.ի Յունուար - 1960 թ.ի Մայիս: Լոյս տեսած է 22 թիւ:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ: *Օրաթերթ:* Հալէպ, 1951 թ.ի Յունուարի 21 - Սեպտ.ի 9: Լոյս տեսած է 177 թիւ: Արտ. եւ պատ. տնօրէն՝ Անդրէաս Տէր Ղազարեան, պատ. **ԽՄԲ.** Յարութիւն Տէր Ղազարեան:

ՈՒՍԱՆՈՂ: Միամսեայ Հանդէս Պատանիներու: *Խմորատիպ:* Հալէպ, 1928 թ.ի Սեպտ. - Դեկտեմբեր ?...: Մեղի ծանօթ է թիւ 4-ը (Դեկտ. 1, 1928 թ.):

ՈՒՍՈՒՄ: *Ամսաթերթ:* Հրատ. Հայ Երիտասարդաց Ուսումնասիրաց Միութեան: Հալէպ, 1925-1928 թթ.: *Խմորատիպ:*

ՊԱՅՔԱՐ ԿԵՆԱՅ: *Պարբերական Մերձաւոր Արեւելքի Որբերու Միութեան:* Հալէպ, 1924 թ.ի Հոկտ.: Այս անունով լոյս տեսած է 1 թիւ, ապա *Պէյրութ* փոխադրուելով լոյս տեսած է Որբաշխարհի Աստղը վերնադրով (1925-1931 թթ.):

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ: Հալէպ, 1960 թ. — ? : Խմբագիր՝ Հայր Յովսէփ Վրդ. Շատարեան: Ունեցած է արարերէնի բաժին մը, որ սկսած է լոյս տեսնել 1954 թ.էն սկսեալ:

Հայերէն բաժինը շրջան մը դադարելէ ետք սկսած է վերհրատարակուիլ 1971 թ.ին:

ՊԱՐՄԱՆ: Ուսանողական պարբերաթերթ Գարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի: Հրատարակուած՝ նախաձեռնութեամբ Ը. Ղասարանի: Հալէպ, 1958 թ.ի Մարտ — Ապրիլ: Լոյս տեսած է 2 թիւ: Մեքենագիր:

ՍԵՒԱՆ: Պարբերագիրք գրականութեան եւ արուեստի: Հայ-լեզուայ Ուսուցչական Միութիւն: Սեւան Հրատարակչական Մարմին: Հալէպ, 1946: Լոյս տեսած է 2 թիւ: Խմբ.՝ Սիմոն Սիմոնեան:

ՍՈՒՐԻԱ: Անկախ օրաթերթ: Հալէպ, 1946 թ.ի Յունիսի 17 — 1960 թ.:

Արտօնատէր՝ Յովհաննէս Եաղըճեան:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ: Օրաթերթ: Օրկան Ս. Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան: Հալէպ, 1922—1927 թթ.: Արտօնատէր՝ Հայկ Թորոսեան, պատ. տնօրէն՝ Տիգրան Երէցեան: Խմբագիրներ՝ Վարդ-Մեխակ (Վարդեվառ Գարանֆիլեան) եւ Ս. Տիւրունի (Սարգիս Քէտէրեան):

Անունով օրաթերթ, սակայն իրականութեան մէջ՝ երկօրեայ:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ: Ուսանողական բաժին: Ամսաթերթ: Հալէպ, 1925 թ.ի Մարտ — 1926 թ.ի Սեպտ.:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ: Օրկան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Սուրբոյ շրջանին: Կիսաշաբաթաթերթ: Հալէպ, 1920 թ.:

Այս նոյն տեղեկութիւնները կրկնուած են Յովհաննէս Պետրոսեանի եւ Ամալիա Կիրակոսեանի հայ մամուլի մատենագիտական աշխատասիրութիւններուն մէջ:

Նուազը Ասպետ եւ Արամ Ասպետ վերոյիշեալ անունով թերթ մը կը յիշատակեն, սակայն 1922 թ.ի Հոկտեմբերին սկսած:

Սուրբոյ եւ Լիբանանի հայ դպրութիւններուն մէջ լրագրական վաստակ ունեցող եւ այդ շրջանին խմբագրական աշխատանք կատարած գրողներ՝ ինչպէս Միհրան Նաճարեան եւ Եղուարդ Ոսկերիչեան, Սուրբոյ եւ Լիբանանի հայ տպագրական եւ լրագրական վաստակին շուրջ անգրագառնալու ատեն չեն յիշատակեր այդ անունով թերթ մը:

Տակաւին, նոյն շրջանին գործած Հնչակեան գրող եւ գործիչ Միհրան Մ. Սէֆէրեան, որ փորձած է հնչակեան մամուլին ամբողջ

ջական ցուցակագրումը կատարել, այդ անունով թերթ մը չի յիշատակեր:

Ըստ մեր կարծիքին, կա'մ նման վերնագրով թերթ մը լոյս տեսած չէ Հալէպի մէջ 1920-ական թուականներուն, եւ կամ ալ 1922 թ.ին սկսած Սուրիական Մամուլ երկօրեայի առաջին քանի մը թիւերը լոյս տեսած են Սուրիական Սուրիանդակ անունով:

ՎԱՀԱԳՆ: Յաւելուած Արեւելք օրաթերթի: Պատանեկան ամսագիր: Հալէպ, 1952 թ.ի Օգոստ.-Դեկտ.: 5 թիւ: Խմբ.՝ Մ. (Մինաս Թէօփօլեան):

ՏԱՐԱԳԻՐ: Օրաթերթ: Գաղաքական-դրական-ընկերային: Հալէպ, 1918 թ.ի Դեկտ. - 1919 թ.: Արտօնատէր՝ Բենիամին Միլտոնեան, խմբ.՝ Յովհաննէս Խաչերեան:

ՏԱՐՕՆԻ ԱՐԾԻԻ: Օրկան Տարօնական ողբի: Ձեռնարկ Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութեան Կեդր. Վարչութեան (Միաց. Նահանգներ): Հալէպ, 1952 թ.: Խմբ.՝ Մկրտիչ Մըկըրտիչեան:

Տարօնի Արծիւը սկսած է հրատարակուիլ Սոֆիա (Պուլկաբիա), ապա Տէթրոյթ (Միաց. Նահանգներ): Ծրագիր կար զայն վերահրատարակել Հալէպի մէջ: Լոյս տեսաւ վերոյիշեալ մէկ թիւը (ԺԱ. տարի, թ. 32) եւ դադարեցաւ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ: Պարբերաթերթ: Հրատ. Հ. Բ. Ը. Մ.ի Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի: Հալէպ, 1950 թ.ի Նոյ.-1951 թ.ի Ապրիլ: Լոյս տեսած է 3 թիւ:

ՐՈՒՀԱՆԻ ԹԱԱՄ (Հոգեւոր ճաշ): Հալէպ, 1931? թ.: Խմբ.՝ Մինաս Յ. Պօղօղլեան:

ՓՈՒՆՁ: Հրատ. Ծէյիս-Մազսուտի Արմենեան Շրջանաւարտից եկրսեռ Միութեան: Հալէպ, 1954 թ.: Լոյս տեսած է 2 թիւ:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԳՈՐԾԱԿՈՐ: Ամսաթերթ: Հալէպ, 1941 թ.ի Յունուար - 1947 թ.ի Ապրիլ: Ա. տարուան հինգերորդ թիւէն սկսեալ կոչուած է Երիտասարդ Գործաւոր: Արտ. տնօրէն՝ Հայր Մարսէլ Վիյար, խմբ.՝ Մկրտիչ Թաշճեան (1942 Յունուարէն սկսեալ):

THE REPORTER: Aleppo Boys' High School Monthly (Տեղեկատու: Հալէպի Մանչերու Բարձր. Վրժ.ի ամսաթերթ): 1929-1932 ? թթ.: Մեր ձեռքին տակ ունինք Դ. տարուան թիւ 4-5-ը (1932 թ. Մայիս-Յունիս): Ունի չորս լեզուով բաժիններ - անգլերէն, ֆրանսերէն, հայերէն եւ արաբերէն:

Ասոնցմէ զաւել Հալէպի մէջ լոյս տեսած են կարգ մը խմորատիպ թերթեր, որոնց ճշգրիտ թուականները մեզի համար անյայտ կը մնան: Ուլամուղ - 1929 թ.ի չուրջ. Մեմֆ - հրատ. Փրանսական

Լիսէի հայ ուսանողութեան (1940-ական թուականներուն)։ Արծիւ – սկաուտական թերթ։ Քրիստափոր – Պատանեկան Միութեան թերթ (1940-ական թուականներուն)։

Պետրոս Գուլումճեան լոյս ընծայած է զանազան վերնագիրներով երգիծաթերթեր – Կալնոշ, Նոր Կալնոշ, Միմոս, Հոսիոս, Քահֆահմերու Շաքաթը, Ծաղիկներ, ևլն.։

Տ Ա Ր Ե Գ Ի Ր Ք Ե Ր

ՍՐԵԻԵԼՔ ՏԱՐԵԳԻՐՔ։ Հալէպ, Ա. տարի, 1948 թ.։ Մէկ տարի։ Պատրաստեց՝ Մ. (Մինաս Թէօլէօլեան)։

ԴԱՄԱՍԿԱՀԱՅ ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ։ Դամասկոս, 1958 թ.։ Պատրաստեց՝ Լուսֆիկ Երրեքեան։

ՄԱՆԱՆԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ։ Հրատ. Հոգեւոր Եղբայրութեան երիտասարդաց։ Հալէպ, 1946-1951 թթ.։ 6 տարի։

ՍՍՍՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔ։ Ձեռնարկ՝ Սասնոյ Հայրենակցական Միութեան։ Հալէպ, 1948 թ.։

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԱԼՊՈՄ։ Հրատ. զրավաճառ Կիւլէսէր Տէմիր-Տեանի։ Հալէպ, 1927-1929 թթ.։ 3 տարի։ Պատրաստեց Եղուարդ Ա. Ոսկերիչեան (ապա՝ Տէր Մաշտոց Քհնյ. Ոսկերիչեան)։

ՍՈՒՐԻԱՀԱՅ ՏԱՐԵՑՈՅՑ։ Հալէպ, 1924-1926 թթ.։ 3 տարի։ Պատրաստեցին՝ Միհրան Աճէմեան, Միսաք Սիսեռեան (Ուլնեցի) եւ Եղուարդ Ոսկերիչեան։

ՏԱԹԵԻ։ Դրական, բանասիրական եւ կրօնական տարեցոյց։ Հալէպ, 1925-1930 թթ.։ 6 տարի։ Նմբ.՝ Արտաւազդ Վրդ. Սիւրմէ-եան։

ՏԱՐՕՆ ՏԱՐԵԳԻՐՔ։ Ձեռնարկ՝ Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութեան։ Հալէպ, 1949 թ.։

ՏԻԳՐԻՍ։ Հրատ. Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան։ Հալէպ, 1946։

ՀԱՅ ՏՊԱՐԱՆՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ

Հայ տպարաններու պատմութիւնը մեր ուսումնասիրութեան անմիջական ծիրին մէջ չի մտներ, սակայն հայ մամուլին զոյու-թիւնն ու գոյատեւումը կապ ունենալով անոնց հետ, ամփոփ ակնարկ մը անհրաժեշտ կը համարենք։

1918 թ.ին Հալէպի մէջ կը յիշուի տպ. Սէպաթ մը (Աճէմեան եղբայրներու սեփականութիւն), որ հաւանաբար ունեցած է հայ տառեր։ Հայ Ձայն եւ Տարագիր թերթերը կը տպուին այս տպարանին, ինչպէս նաեւ Մարոնիթ տպարանին մէջ։ Մ. Տէր Ստեփանեան, Յովսէփ եւ Միշէլ Աճէմեան եղբայրներու Սէպաթ տպարանէն տը-

պաղարական անհրաժեշտ տառեր եւ գործիքներ ղենլով կը նուիրէ Սեդրակ Կէպէնլեանի, որուն Հայ Զայն Թերթը լոյս կը սկսի տեսնել անձնական տպարանէ:

Նոսրեայ եւ ամէնօրեայ թերթերը սկիզբը լոյս տեսած են տեղական տպարաններու մէջ, ապա ունեցած են իրենց առանձին տպարանները: Այս է եղած պարագան Սուրիակամ Մամուլի, Սփրատի, Արեւիքի, եւլն.:

Մինչեւ 1925 թ., ըստ երեւոյթին, գոյութիւն ունեցող տպարանները բաւարար տառեր եւ տպաղրական վարպետութիւն չունէին, որպէսզի կարենային խնամքով զերքեր տպել: Այս է պատճառը որ մինչ այդ լոյս տեսնել սկսող տարեգիրքերը տպաղրուած են այլ երկիրներու մէջ. օրինակ՝ Սուրիահայ Տարեցոյցին Ա. Հատորը (1924 թ.) տպաղրուած է Գահիրէ, Ջարեհ Պէրպէրեանի տըպարանին մէջ, իսկ Արտաւազդ Վրդ. Սիւրմէեանի Տաքիւ տարեգիրքին Ա. Հատորը (1925 թ.)՝ Պոլիս, Յ. Մ. Սեթեան տպարանին մէջ:

Բայց Բիւզանդ Յ. Թովալեանի Արաքս տպարանին հիմնումը առիթ պիտի ստեղծէր որ վերոյիշեալ տարեգիրքերն ու այլ գիրքեր սկսին լոյս տեսնել այս տպարանէն: Թովալեանի տպարանը պիտի գործէր մինչեւ 1930 թ. (20), որմէ ետք տպարանատէրը պիտի փոխադրուէր Փարիզ, ուր հիմնելով իր նոր տպարանը՝ 1950-ական թուականներուն պիտի սկսէր լոյս ընծայել Անդաստան պարբերաթերթը:

Դժուար է մեղի համար իրենց հիմնադրութեան թուականի կարգով յիշատակել Հայ տպարանները, սակայն ժամանակադրական մօտաւոր կարգով մը հետեւեալ տպարանները գործած են Հալէպի մէջ — Հայ Զայնի, Սուրիական Մամուլի, Արաքս, Մարանաթա, Արարատ, Գուլէճ (Ամերիկեան Գուլէճի), Անի, Տէր Սահակեան (Աւետիս Տէր Սահակեան), Նայիրի (Անդրանիկ Ծառուկեան), Սեւան (Հայկազայ Ուսուցչական Միութիւն), Տիգրիս, Արեւելք, Ճիզմէճեան, Ռոթոս, Ոսկետառ, Շիրազ, Մասիս, Գօգօ, Գարուն, եւլն.:

Դամասկոսի մէջ մեղի ծանօթ է Լուսթիկ Նիրիքեանի տպարանը: Վիմատիպ տպաղրութիւն տեղի ունեցած է Ֆրէյհա տպարա-

20) Բ. Թօփալեանի մեկնումով Արաքս տպարանը կը գնուի Աւետիս Տէր Սահակեանի կողմէ եւ մայիսին ամուսնը պահելով տպագրական գործը կը շարունակէ: Հետագային Տէր Սահակեան տպագրական կազմածնիւր ծախելով՝ տպարանին ամուսն ալ կը փոխանցէ գնորդին եւ իմֆ իր տպարանը կը վերանուանէ Տէր Սահակեան տպարան: 1950 թ.-ի սկիզբը Տէր Սահակեան իր տպարանով պիտի փոխադրուի Պէրպէր՝ հոն շարունակելով իր տպագրական աշխատանքները:

նին մէջ: Իսկ Ալէքսանտրէթի (Իսկէնտէրուն) մէջ մեզի ծանօթ է տալ. Ալէքսանտրէթը:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

1913 թ.էն մինչեւ մեր օրերը շուրջ 75 մեծ ու փոքր թերթեր եւ տասնեակ մը տարեգիրքեր լոյս տեսած են: Գաղութը ատակ էր աւելիին, սակայն պայմանները թոյլատու չէին զայն իրազօրծելու համար: Անդրադարձանք այդ պատճառներուն եւ կրկնութենէ կը խուսափինք: Ցաւալին այն է որ 1963 թ.էն սկսեալ, երբ կը դադրէր Արեւիկ օրաթերթը, սուրիահայ գաղութը փաստօրէն առանց հայ մամուլի կը մնար: Այդ թուականէն ետք լոյս տեսած թերթերը պաշտօնական հրատարակութիւններ են եւ իրենց բովանդակութեամբ անկարող՝ հայ ընթերցող հասարակութեան պապակը դռնացնելու:

Այսօր Սուրիոյ մէջ ունինք չորս թերթեր՝ Հայ Ծերանոցի Հայ Դերանոց պարբերաթերթը, Անդրանիկ Նաճարեանի Մշակոյթ պարբերադիրքը, Լազար Նաճարեան Ճեմարանի Բարձունք տարեգիրքը եւ Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի Պարբերաթերթը:

A HISTORY OF THE ARMENIAN PRESS IN SYRIA

ARDASHES DER KHACHADOURIAN

In Syria, the Armenian press has developed mainly in Aleppo. Armenian life in this city is a matter of centuries, with its beginnings in the 15th century. The Armenian Church of « Karasnitz Mangantz » dates from this century. A substantial increase of the Armenians in Aleppo occurred during the early second part of the 19th century. In 1915, the genocide and the forced deportations perpetrated by the Turks resulted in tens of thousands of Armenians taking refuge in Aleppo.

The first Armenian newspaper in Aleppo, AL-FURAT, was published by the Ottoman government, in the years 1869-1870. From 1915 down to the present time, 75 publications — newspapers, weeklies, monthlies, periodicals, year books, etc. — have been issued, at different times, in the Armenian language. Yeprad (daily newspaper, 1929-1949), Arevik (daily newspaper, 1946-1960), and Nayiri (literary monthly) are the worthiest representatives of the Armenian press in Syria.

At present, four Armenian periodicals are issued in Aleppo.